№ 29 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8 — 1907 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8 № 29

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1907 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԵՂԲ. ՍԱՓԱՐԵԱՆՑՆԵՐԻ

ԵՒ

ՏԷՐ-ՍԱՀԱԿԵԱՆԻ

պատրաստ հագուստների Պարիժակի խանութում,

որ գտնվում է Գոլովինսկի պրօսպեկտի վրա

առաջին ԳԻՄՆԱԶԻԱՅԻ հանդէպ,

ՆՇԱՆԱԿՎԱԾ Է

ԷԺԱՆԱԳԻՆ ՎԱՃԱՌՔ

Յունվարի 22-ից ՄԻՆՉԵՒ փետրվարի 10-ը՝

Գները ֆաբրիկային են և կապոյտ մատիտով նշանակված:

Հեռախօս № 258

(21, 25, 28, 4, 8) ա. 4—5

Բացված է բաժանորդագրութիւն

ՀԱՅԵԼԻ

Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,

որը երբեմնապէս լոյս կը տեսնի «Հայելիի յաւելուած» անուան տակ։

Տարեկան բաժանորդները կը ստանան՝

1) 50 № «Հայելի»։ 2) 12 գեղարուեստական նկարներ, որ տարվայ վերջը առանձին ալբոմ կը կազմեն։ 3) 2 մեծադիր գունաւոր պատկեր հայկական կեանքից (50×60 սմ.) (Առաջին պատկերը կուղարկվի Զատկական համարի հետ, իսկ երկրորդը սեպտեմբերի սկզբին)։ 4) 1 պատի տախտակ պատկերազարդ Oրացոյց 1908 թ.։ 5) 1 յայտնի հայ երգիծաբանների խմբական նկար։

Բաժանորդագրութեան տարին է նոյեմբերից նոյեմբեր։

Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ր., դուրսը՝ 5 րուբ.։ Կէս տարին՝ 2 ր., դուրսը՝ 2 ր. 50 կոպ.։ Երեք ամիսը՝ 1 ր., դուրսը 1 ր. 25 կ.։ Արտասահման՝ տարեկան 6 րուբլի, կէս տարին 3 րուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3. կամ Tiflis, Rédaction du journal «Haeli».

Խմբագիր՝ Վ. Պետրոսեան, Հրատարակիչ՝ Բ. Ճէպէյեան

(հ. կ.) առ. 3—5

Բացված է բաժանորդագրութիւն

և մինչև փետրվարի 12—14 լոյս կը տեսնէ

„ՅՈՒՇԱՐԱՐ“

Թատերական-գրական-գեղարուեստական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՐԸ

որ արդէն մամուլի տակ է։ Թերթիս աշխատակցելու են տ. Սիրանոյշ, պ.պ. Ահարոնեան Ավ., Բաբայեան Լևոն, Բաշինջաղեան Գ., Երեցեան Գարեգին, Թումանեանց Յովհ., Թորամանեան Թորոս (ճարտարապետ), Լէօ, Memento Mori, Շանթ, Փափազեան Վրթ., Քափանակեան Ստ., Տէր-Աստուածատրեան Գ., Նար Դոս, Վրոյր և ուրիշներ։ Թերթի նպատակն է ծանօթացնել և տարածել գեղարուեստի գաղափարը հասարակութեան զանազան խաւերում, օժանդակել նրա ճշտիւ ըմբռնմանը և ամեն կերպ նպաստել գաւառական բեմերի զարգացման։ Այս տարի տալու է 18 համար 100 ից աւելի պատկերներով և 9 հատ ընտիր պիեսներ, որոնց առանց դժուարութեան ամեն տեղ կարելի է ներկայացնել։ Տարեկան բաժնեգինն է 5 ր., արտասահման 6 ր. կամ 3 դոլլար։ Թիֆլիսում բաժանորդ գրվել կարելի է 1) «Գուտենբերգ» գրավաճառանոցում, 2) «Փարոս» քիօսկում, 3) խմբագրատանը, Սերգիեվսկայա № 3, ուր դիմելու են օտարաքաղաքացիք։

Խմբագիր-հրատարակիչ՝ օր. Մարիամ Մեհրաբեան

առ. 5—5

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մշտական մահճակալներով

Ելիզավետինսկայա փողոց № 79, տելեֆօն 1026.

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր

ՄԻՔԱՅԷԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ.—11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ՆԻՒԱԶԱՐԵԱՆՑ.—11—12 ժ.—Ջղային, ներքին հ. և էլէկտրօբուժութիւն։
Գ. Հ. ԹԱԴԵՒՈՍԵԱՆ.—12—1 ժ. ներքին և երեխայոց հ։
Ի. Ն. ԱԻՍՏՈՒՍԵԱՆՑ.—12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ս. Ա. ԼԻՒՐԻ.—12—1 ժ. քթի, կոկորդի և ականջի հ։
Մ. Գ. ԿԻՄՈՆՏ.—1—2 ժ. վիրաբուժական հ.։
Գ. Ա. ԲԷՑԷՐ.—1—2 ժ. երեխայոց և ներքին հ.։
Ի. Ն. ԹՈՒՄԱՆՈՎ.—5—6 ժ. (երեկոյեան)-կանանց հ. և մանկաբարձութիւն։

Հիւանդանոցում բժշկումն հիմնօզով, կատարվում են միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ծծմայրների ընտրողութիւն։

Բժշկական խորհուրդի համար վճարը 50 կոպ. Օպերացիաների և համախորհուրդների վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նօմէրներից։

առ. և. հ. կ. 22—100

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Հինգշաբթի, փետրվարի 8-ին

կը կայանայ

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԲԱԺՆՈՎ

Բարեհաճ մասնակցութեամբ տիկ. Վան-Բրանդտի, Մ. Գ. Բալաշեվսկու, Մ.-Ի. Կլօպօտովսկայի, Ն. Դ. Նիկօլայևի, Զ. Ս. Կօգանի և Զիալկօվսկու։

Այդ պարահանդէսի արդիւնքը կը յատկացվի Թիֆլիսում հիմնվելիք պօլիտեխնիկական ինստիտուտի գլխաւոր կօմիտետի միջոցները ուժեղացնելու համար։

Կօնցերտային բաժանմունքից յետոյ կը ցուցադրվեն «Иллюзіонъ» թատրոնի Ս. Օ. Իվանիցկօյի պատկերները, իսկ վերջում նկարիչ Օ. Ի. Շմէրլինգը մոգական լապտերով կը ցոյց տայ տեսարաններ օրվայ դէպքերից։

Մանրամասնութիւնները տես աֆիշաներում։ Բոլոր դահլիճները գեղարուեստապէս զարդարված կը լինեն Գ. Ձ. Գրինէվսկի, Մ. Ի. Տօիձէ և Օ. Ի. Շմէրլինգ նկարիչների ղեկավարութեամբ։ Պարահանդէսին լինելու է անկորուստ վիճակախաղ (безпроигрышная лотерея)։ Համերգային բաժնի սկիզբն է երեկոյեան ժամը 9 ին, իսկ պարահանդէսինը ժամը 11-ին։ Զգեստների ձևը. սիւրտուկ կամ ֆրակ։ Մուտքի տոմսակների գները. կանանց 2 ր. 10 կ., տղամարդկանց—3 ր. 10 կ., ուսանողական—1 ր. 10 կ.։ Ով որ ունի պարահանդէսի տոմսակ, կարող է ձրի մտնել Թատրօնական դահլիճը, իսկ 15 ր. 40 կ. և 25 ր. 40 կ. օթեակների տոմսակները վերցնողները պարահանդէսի համար առանձին չեն վճարում։ Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ եղբ. Գուլասպօֆների, Լօտի, Մայզելսօնի, Մասսիւրի և Խիդշէկէլի խանութներում, իսկ պարահանդէսի օրը, երեկ. ժամը 6-ից, Արտիստական ընկերութեան շինութեան մէջ։ (շ. հ.) առ 2—2

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՐՈՒԴԷՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.
Բժ. Ֆ. Վ. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.
Բժ. Մ. Ի. ԽԱՆՋԷՎՍԿԻ.—Ականջի, քթի և բգի, չորեքշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.։
Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.
Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՍՕՎ.—Քթի, բգի և ականջի, երկ. չոր. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.
Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիմնօզով ամենայն 4—5 ժ.
Բժ. Ա. Ն. ՏՆՏՐԱՁԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.
Բժ. Ա. Տ. ՐՕԶՄԱՐԻՆՍԿԻ.—Երեխ., երկ., չորեք 4—5 ժ., երեք շաբ. 3—4 ժ.։
Բժ. Ն. Ի. ՆԷՈՒՅՄԻՆ.—Աչքի, երկ., ուրբ., 12—1 ժ.
Բժ. Ա. Ա. ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., երեքշ., չոր., ուրբ., շաբ., կիր. 2—3 ժ.։
Բժ. Զ. Ֆ. ՆՆՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.
Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ
Բժ. Կ. Ի. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ } Կլինիքական անալիզ
Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմն. մասսաժ, էլեքտր. 4—6 ժամ.
Մ. Ե. ԶՕՐՕՓՑԵՎԱ.—Մասսաժ. 11—4. ժ.
Ս. ԽԱ. ՊԱՒԼՕՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.
Բժ. Կ Գ, ԴՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին հիւանդ. ամեն օր 12—1 ժամը։
Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Երեխ., երեքշ, հինգշ. շաբ. 4—5 ժամը։

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիպնօզել, ատամունների և ծամաների քննելը—ըստ համաձայնութեան։

առ. (ա. օ.) 62—144

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Անաստասեէվսկայա փողոց, տուն № 18, հեռախօս 969։

Հիւանդ կանանց ընդունելութիւնը ամեն ժամանակ նախորդ յայտարարութեան համաձայն։

Երթևեկ հիւանդների ընդունելութիւնը ամենայն օր ցերեկվայ ժամը 11—12, հետևեալ բժիշկների ձեռքով.

Ա. Ր. Ֆիշէր.—երեքշաբթի, շաբաթ։
Ա. Գ. Բարսուկօվ.—չորեքշաբթի։
Ս. Պ. Շահ-Պարոնեան.—կիրակի, հինգշաբթի։
Ա. Ա. Նօվիցկի.—երկուշ. ուրբաթ։

Երեխաների հիւանդութիւնների համար Ն. Զ. Ումիկօվը հիւանդ երեխաներին ընդունում է երկուշաբթի և հինգշաբթի օրերը, 2—3 ժ.։

Հիւանդանոցին կից կատարվում են քիմիկօ-միկրօսկօպիական հետազօտութիւններ՝ մէզի, խորխի և այլն։

Ծծմայրերի քննութիւն, ծաղկի պատուաստումն և այլն։

(հ. շ. ե.) 4—50

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ո՞ւր է ազատ քաղաքացին. Վերջին տեղեկութիւններ. Ընտրութիւնները Կովկասում. Պատգամաւորների կազմը. Պետական Դումայի ընտրութիւնների շուրջը. Կաթողիկոսական կոնդակներ. Թիֆլիսի ներկայացուցչի ընտրութիւնը. Կովկասեան պատգամաւորները. Կառավարչական փաստեր և լուրեր. Թատրոն և երաժշտութիւն. Տեղեկութիւններ գաւառից. Նամակ Բագուից. Ո՞րն է իրողութիւնը. Ճեմարանի վերջին դէպքերի մասին. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ժօրէսի ճառը. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՈՒՐ Է ԱԶԱՏ ՔԱՂԱՔԱՑԻՆ

I

Ժողովրդի ազատ կամքը ազատօրէն չարտայայտվեց ներկայ ընտրութիւնների ժամանակ։

Այդ բաւական չէ։ Նա շատ տեղ արտայայտվեց բոլորովին խեղաթիւրված և կեղծված։

—Մենք չը գնացինք ընտրութիւններին, ասում են և գրում են մեզ շատերը։

—Մենք ձայն տուինք բոլորովին անծանօթ ու մեզ անյայտ մարդկանց, գանգատվում են ուրիշները։

—Մենք չը կարողացանք նախընտրական ժողովներ ու խորհրդակցութիւններ ունենալ և չը կազմակերպվեցինք—յայտնում են միւսները։

—Մեզ սպառնալիքներ արին և պատուիրեցին որոշ կուսակցութեան ցուցակով առաջնորդվել։

Եթէ մենք ցանկանանք վերլուծութեան ենթարկել այս և սրանց նման յայտնութիւններն ու գանգատները, կը նկատենք, որ մեր առաջ դրված է մի տխուր երևոյթ՝ այն է ժողովրդի ձայնի ընկճված լինելը, ժողովրդի շարունակվող ստրկութիւնը, ժողովրդի ընդարմացած վիճակը։

II

Ժողովուրդը ստրուկ էր, երբ կառավարչական բիւրօկրատիան էր նրան հրամայում ու սաստում, նա ստրուկ է և այժմ, երբ նրան հրամայում են և սաստում ռազմական կազմակերպութիւններ։

Նա ոչ առաջ էր ազատ և ոչ այժմ է ազատ։ Ոչ առաջ էին թողնում նրան, որ նա ազատօրէն իր կամքը յայտնէ և ոչ այժմ են թողնում, որ նա ազատ բերանով բարբառէ իր սրտինը։ Բիւրօկրատիան պնդում էր, թէ նա աւելի լաւ գիտէ ժողովրդի կարիքը, քան ինքը ժողովուրդը, նոյնը բարձրագոչ ազդարարում են իր անվերաբերութեամբ ռազմական կազմակերպութիւնները։

Խեղճ ժողովուրդը մնացել է շուարած և միևնոյն ժամանակ ընկճված ու սարսափած։ Երկու կողմից էլ նա լսում է հրաման, սպառնալիք, յաճախ և մտրակի շառաչիւն։

Նրան ճնշում են մի կողմից բիւրօկրատիայի հայրական հովանաւորութիւնը, իսկ միւս կողմից ազատագրողների բռնութիւնները։

Իսկ ժողովրդական ազատութիւնը մնում է միայն երևակայութեան մէջ, միայն խոստումների մէջ։

III

«Ժողովրդական ազատութիւնը երևակայութեան և խոստումների մէջ»—որպիսի ծաղր է դա մեր ժամանակի, մեր ազատագրական ճառամաբանութիւնների վրա։

Ոչ ոք չէ ուզում թոյլ տալ, որ ժողովուրդը արդարև ազատօրէն, արձակ-համարձակ իր կամքը յայտնէ, իր ասելիքը ասէ, իր տենչանքներն արտայայտէ։

Եւ բոլորը մրցում են մէկը միւսի ձեռքից խլելու հրամայողական ու իշխանական այն գաւազանը, որով պէտք է ժողովուրդը հօտ հպատակ ու կատարող մնայ։

Եւ յետոյ զարմանում են, որ ժողովուրդը այնքան անտարբեր, խեղճ, ստրկական է պահում իրան և այնքան անգիտակցօրէն տալիս է իր քուէները սրան ու նրան։

Դրանք ժողովրդական ազատ քուէներ չեն, այլ ստրուկների ու ճնշվածների շղթաների բեկորներ, որ թափվում են քուէատուփերի մէջ։

IV

Դուք, ժողովրդական կամքը բռնադատողներ, հրճվում էք հաշուելով ձեզ համար նպաստաւոր քուէները և թմբկահարում էք յաղթութիւնների մասին. բայց միթէ չէք զգում, որ այդ քուէատուփերի շուրջը տիրում է մեռելային սառնութիւն, ժողովրդական հարազատ կամքի խեղաթիւրում ու սպանում։

Ժողովրդական ազատութիւն—սիրելի ու նուիրական գաղափար, երբ արդեօք դու պէտք է հանդէս գաս քո իսկական ոյժով ու վեհութեամբ և դէն շպրտես այն դիմակները, որոնցով շահամոլ ձեռքեր մօտեցել են քեզ։

Ժողովուրդ, թօթափիր քեզնից ստրկութիւնը, ինչ հրապոյրներով էլ նա համեմված լինի և տէր դարձիր քո սեփական հասարակական գործերին։

Արիութիւն է պէտք, արիութիւն։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշի, 6 փետրվարի։ Եւլախի պօստային խճուղու վրա, Ագդամի և Խօջաևալի մէջև կողոպտելու նպատակով սպանել են պահակ Ալէքսանդրովին։

Փետրվարի 6 ին։ Գանձակի նահանգի Կամէնկօս գիւղում կողոպտել են քահանայ Մովսիսեանին, որից տարել են 300 րուբլի։

(«Հ. Գ.»)

Շամախի, 6 փետրվարի։ Առաւօտեան ժամը $8^3/_4$-ին զգացվեց երկրաշարժ։

(«Հ. Գ.»)

Բաթում, 5 փետրվարի

Ինչպէս որ այսօր հեռագրով էլ հաղորդեցի, առաւօտեան ժամը մօտ 9-ին, Մանթաշեան և ընկ. գործարանի սուլիչը սկսեց շատ տխուր ձայնով ղօղանջել, որ պարզ նշան էր հրդեհի։ Որքան և դժուար լինէր այդ հրէշային գործողութեան մասին կտրական կարծիք յայտնելը, թէ ինչպէս և ինչու առաջացաւ նա, բայց և այնպէս ինձ համար, որպէս Բաթումում ապրող անհատի, սուլոցի տխուր ձայնը լսելուն պէս, գրեթէ որոշ էր և զգացի, որ դա հետևանք էր բանուորների մէջ առաջացած վերջին խլրտումների, որը ծագել էր մօտաւորապէս հետևեալ պայմաններից։ Առանց երկարացնելու, գործարանը երկար ընդմիջումից յետոյ բացվեց միայն երկու բազլիւշնի ապարատներով. մի քանի ժամանակից յետոյ երկու կողմերի—ֆիրմայի և գործաւորների—համաձայնութեամբ ժամանակաւորապէս սկսվում է բանեցնել նաև երկու ուրիշ ապարատներ, ուրեմն բոլորը չորս։ Ինչ ինչ պատճառներից դրդված՝ ֆիրման վերջերս յայտնում է բանուորներին, որ նա ստիպված է բանող չորս ապարատներից երկուսը դադարեցնել, իսկ երկուսը կը գործեն միշտ։ Բանուորութեան մի մասը համաձայնում է, իսկ միւս մասը յայտնում է ֆիրմային, որ կամ նոյնութեամբ շարունակի և կամ բոլորովին կողպէ գործարանը։ Ֆիրման էլ այն է պատասխանում, որ եթէ այդ մասին հակառակութիւն կը լինի, նա ստիպված բոլորովին կը դադարեցնէ գործարանը։ Այդ պատճառով էլ գրեթէ մի շաբաթ է, ինչ բանուորների մէջ մեծ տուր ու դմփոց կար, որը և պսակվեց այսօրվայ հրէշային քաջագործութիւններով։ Գործարանում կրակը սկսվում է նախ մի տեղ, երբ աջողվում է այնտեղ հանգցնել, ապա սկսվում են ուրիշ տեղեր՝ գլխաւորապէս պատրաստված մնացուկներով լի մեծ ամբարներից մէկում, որը ահա արդէն գիշերվայ ժամի 9-ն է և սօսկալի բոցերը դեռ չեն կարողանում լափել, վերջացնել նրան... Շնորհիւ ձեռք առնված հրշէջային ուժեղ միջոցների, կրակը չը կարողացաւ տարածվել գործարանի միւս մասերը։ Թէև տաք ապաւորութեան տակ, բայց և այնպէս կատարելով թղթակցի իսկական պարտականութիւնը, հաղորդում եմ այն, ինչ որ և ինչպէս որ ընդհանրապէս խօսվում է քաղաքում։ Տայ Աստուած, որ իմ հաղորդածները սխալ լինեն և հրդեհը բոլորովին ուրիշ շարժառիթներից առաջ եկած լինի։

Գ. Գրիգորեանց

Բաթում, 6 փետրվարի։ Մանթաշեվի գավօդի հրդեհը թուլանում է։ Այրվեցին և փչացվեցին նաւթի 100,000 արկղիկներ։ Վնասը հասնում է մօտ 300,000 րուբլու։ Արհեստանոցները և մեքենագործական բաժինները չը փչացվեցին և ուրեմն հնարաւոր կը լինի աշխատանքները շուտով վերսկսել։ Ըստ երևոյթին գաւօդը հրդեհել են անբաւական բանուորները։

(«Հ. Գ.»)

Բագու, 5 փետրվարի։ Երէկ սպանվեց ակնավաճառ Մանդասարօվը։ Հանգուցեալը մօտ օրերս սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան ռազմիկ խմբից սպառնական նամակ էր ստացել, որով նրանից փող էին պահանջում։

(«Հ. Գ.»)

Գուդաութ, 1 փետրվարի

Այսօր ոստիկանութիւնը ձերբակալեց մի երիտասարդի՝ ուսանողի հագուստով, որը, ներկայացնելով իրան իբրև Կովկասի պօլիտեխնիկական ինստիտուտի յանձնաժողովի կողմից Թիֆլիսից ուղարկած, փող հաւաքելու համար, ներկայացնում է ինչ որ «Списокъ пожертвователей» վաւերացրած կարմիր կնիքով «Кавказскій политехническій институтъ»։ Այդ պարոնը իր խաբեբայութիւնը աջողեցնելու համար դիմում է հետևեալ ձևին։ Նախ ոչ ոքի չը դիմած, ինքը իր ձեռքով գրում է СПИСОКЪ-ի մէջ 3—4 քաղաքի յայտնի և ազդեցիկ անձնաւորութիւնների անունները, որոնք՝ իբր թէ փող են նուիրել (բայց ոչ նուիրել են և ոչ էլ երեսները տեսել է). ահա այսպէս դիմում է քաղաքիս մի քանի ինտելիգենտներին, որ աջակցեն նրան փող հաւաքելու գործում վերոյիշեալ նպատակի համար. որոնք էլ հաւատում են այդ պարոնին և աջակցում նրան «նուէրներ» հաւաքելուն. հաւաքվել է 35 րուբլի, բայց այդ «ստուդենտի» տուած պատասխանների և խօսակցութեան մէջ նկատվում է ինչ որ կասկած. վերջապէս կեղծիքը բացվում է հետևեալ կերպով։ Այստեղի հաշտարար-դատաւորը՝ (որին դիմել և փող են ստացել) գնում է երեկոյեան բժշկին տեսնելու (որը հիւանդ էր). ահա այդտեղ խօսք է բացվում Կովկասի ինստիտուտի մասին և հաշտարար դատաւորը ասում է բժշկին, որ ձեր անունն էլ կար СПИСОКЪ-ի մէջ, որ դուք էլ նուիրել էք 3 րուբլի։ Բժիշկը զարմանում է, և ասում է որ ոչ ոք չէ դիմել իրան և ինքն յիշեալ անձնաւորութեանը չէ տեսել։ Ահա այստեղից պարզվում է կեղծիքը. իմաց են տալիս ոստիկանութեան և պրիստաւը գիշերով գնում և պ. «ստուդենտին» ձերբակալում մի բէստօրանի մէջ, փողերը առնում են մօտից. նա այժմ բանտումն է։

Փ. Մինասեան

Լօնդօն, 6 փետրվարի։ Համայնքների պալատում Րէնսիմէնը արած հարցապնդման պատասխանից, որ ստացված տեղեկութիւնների համաձայն պարսից մէջլիսը պահանջել է, որ ձևականապէս ընդունվի միապետի իշխանութեան սահմանափակումը և մինիստրների պատասխանատուութիւնը ժողովրդական ներկայացուցչութեան առաջ։ Այդ պահանջը Շահը ընդունել է։ Բրիտանական կառավարութիւնը անհրաժեշտութիւն չէ նախատեսում՝ միջամտել Պարսկաստանի ներքին գործերին։

(«Հ. Գ.»)

Նոր-Նախիջևան, 7 փետրվարի

Վաղը Նախիջևանի Դումայի դահլիճում կը կայանայ ժողով՝ լսելու մեր պատգամաւորութեան զեկուցումը և նուիրատուութիւններ ժողովելու մասին։

Հ. Սաաքեան

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Խմբագրութիւնս ստացաւ հետևեալ հեռագիրները.

Ռոստով, Դօնի վրա, փետրվարի 6-ին 4 ժ. 16 ր.։

Ռոստովից Պետական Դումայի պատգամաւոր է ընտրված Մովսէս Աջեմեանը։

Ալիխանեան

Ռոստով Դօնի վրա, փետրվարի 7-ին. 9 ժ. 41 րոպէ։

Կադետների և սօցիալ-դեմօկրատների բլոկը Ռոստովի և Նոր-Նախիջևանի կողմից Պետական Դումայի անդամ ընտրեց Մովսէս Աջեմեանին (կադետ)։ Հ. Ս.

Կարս, 6 փետրվարի

Այսօր կայացաւ Կարսի շրջանից Դումա գնալու պատգամաւորի ընտրութիւնը։ Պատգամաւոր ընտրվեց Յ. Ն. Աթաբէկեանը, որը ստացաւ 8 սպիտակ, 6 սև. Ներկայ էին 15 ընտրողներ, մնացած երկուսը՝ Զ. Աչարինսկին և լեհնոյ բեկգօր Հաջիեվը ժողովը բացվելուց ուշ ներկայանալու համար զրկվեցան մասնակցելու իրաւունքից։ Պատգամաւորներից 6-ը հայ էին, 5 թուրք, 1 մալական, 1 ռուս և 1 յոյն։

Յակովբ Գոլանձեան

Գանձակ, փետրվարի 7-ին

Երէկ երեկոյեան Պետական Դումայի պատգամաւորութեան համար քուէարկվեցին քաղաքային դպրոցի ուսուցիչ Ստեփան Տէր-Աւետիքեան և Երիցեանը։ Ձայների մեծամասնութեամբ ընտրվեց առաջինը։ Տէր-Աւետիքեանի հարցը նախօրօք վճռված էր, դեռ փետրվարի 5-ին այնպիսի դրութեամբ և պայմաններով, որոնցով ի նկատի չառնվեց ընտրողների գիտակցական վերաբերմունքը և կամքի ազատութիւնը։ Դաշնակցականների՝ մանաւանդ Թիֆլիսից եկած երկու պարոնների՝ կազմակերպված ճնշումը վճռին մի այնպիսի հետևանք տուեց, որ առաջ բերեց հասարակութեան ծայրահեղ զարմանքը։ Հայ պատուիրակների թիւը 18-էր, բոլորն էլ—սակաւ բացառութեամբ—ինտելիգենտ գիւղացիներ, կային նոյնիսկ անգրագէտներ. իսկ թուրքերը իրանց թեկնածուի հարցը քննում էին ազատ և միաձայն ընտրեցին համալսարանաւարտներ Խասմամէդօվին և Յօյսկուն։

Դիլտարօվ

Թիֆլիսի նահանգի կողմից Պետական Դումայի անդամ առաջարկված Սիլվեստր Մօխաէլովիչ Ջուգելին—Քութայիսի նահանգի Շորոպանի գաւառի քահանայի որդի է, Թիօնէթի գաւառի հողատէր. դուրս է եկել Թիֆլիսի վրաց հոգևոր դպրոցի 3-րդ դասարանից, 31 տարեկան է, աշխատակցել է Թիֆլիսում լոյս տեսնող վրաց լրագիրներին և եռանդուն մասնակցութիւն է ունեցել և ունի սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան մէջ, որի աչքի ընկնող գործիչներից մէկն է։

Նիկոլայ Ազգամելովիչ Կացիաշվիլին Թիֆլիսի նահանգի, Գօրու գաւառի Կվեմօ-Գօմի գիւղացի է։ Դուրս է եկել վրաց ազնուականների գիմնազիայի երկրորդ դասարանից. հողագործ, տեղական սօցիալ-դեմօկրատական կազմակերպութեան անդամ է։

—

Բաքւում, սօցիալ-դեմօկրատական բլօկը Պետական Դումայի անդամութեան համար թեկնածու է ճանաչել Սերգէյ Վորոգանեանին և Ս. Դեվդարեանին։

—

Երևանում, փետրվարի 3-ին, Երևանի գաւառի հողատէրերի համագումարին նահանգական պատուիրակ է ընտրվել Բէկը-Դալիգար գիւղի բնակիչ Յակոբ Մուղդուսի-Աբրահամեանը։

—

Ալէքսանդրապոլում, Ալէքսանդրապօլի գաւառի հողատէրերը թեկնածու են ընտրել Դաշնակցութեան թեկնածու Աւ. Սահակեանին։

—

Նոր-Բայազէտ, փետրվարի 4-ին

Փետրվարի 1-ին, տեղիս հաշտարար դատարանում, կայացաւ մեր գաւառի գիւղական պատուիրակների ընտրութիւնը։ Գաւառի ամբողջ գիւղացիութեան կողմից ներկայացուցիչներ, երբեմն տասնեակներ, ներկայ էին 16 հասարակութիւնների կամ համայնքների կողմից 30 հոգի միայն, որոնք ունեցան 6 ընտրված պատուիրակներ։ Ապա միւս օրը տեղի ունեցաւ մանր մուլքադարների ընտրութիւնը, որտեղ ընտրվեցին 4 հոգի, որոնք փետրվարի 3-ին կայացած կալուածատէրերի վերջին ընտրութեան միջոցին տուին մի պատուիրակ։ Այդպիսով ահա Նոր-Բայազէտի գաւառը, քաղաքի հետ միասին, տուեց 8 հոգի պատուիրակներ, որոնք են. 1) պ. պ. Գ. Արծրունի՝ քաղաքի հասարակութեան կողմից, 2) Ստ. Բատիկեանց՝ կալուածատէրերի կողմից, 3) Համբարձում Գասպարեանց՝ գըխ-բուլաղցի՝ 4) Դալալ Պօղոսեանց՝ ալուչալուեցի, 5) Կարապետ Պետրոսեանց՝ Ներքին-ախտեցի, 6) Գաբրիէլ Մուրադեան՝ քարվանսարեցի, 7) Հայրապետ Յովհաննէսեանց՝ բանդամալցի և 8) Յակոբ Խէչոյեանց՝ արզաքենդցի։

Մեր գաւառի գիւղական պատուիրակների մեծամասնութիւնը, ըստ երևոյթին, պատկանում է Դաշնակցութիւն կուսակցութեանը. դրանք բոլորն անգոյն գիւղացիներ, այդ կուսակցութեան լիդերների թելադրութեամբ, հակառակ շատերի համոզմունքին, նրանց քուէն պիտի տան անշուշտ այն անձնաւորութիւններին, որոնց Երևանում ցոյց կը տան կուսակցութեան կուսակալները... Իսկ սրանք, պատուիրակները, բոլոր խեղճ ու կրակ գիւղացիներ, խօսք չը կայ, որ Երևանում ինչ եղանակով «սազ» անեն, այն եղանակով էլ կը պարեն. հաճելի կը լինի այդ «պարը» այն գիւղական համայնքին կամ ժողովրդին թէ ոչ, որոնց կողմից ընտրվել են նրանք,—միևնոյն է նրանց համար։ Բաւական է «փիդայիներից» մէկը զգուշացնելով պատուիրակներից մէկնումէկին ասի թէ «քուէդ տալու ես այս ինչին կամ այն ինչին»—դա արդէն օրէնք է նրա համար։

Մեր պատուիրակները արդէն բոլորն էլ մեկնել են Երևան, որտեղ ամսիս 6-ին, մասնակցելու են նահանգական համաժողովին, որը ընտրելու է Պետական Դումայի համար 3 հոգի պատգամաւորներ—2 հայ, մէկ թուրք։

Գ. Մինասեան

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԿԱԶՄԸ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 փետրվարի։ Պետական Դումայի անդամներ ընտրվել են.

Արխանգելսկի նահանգում, գիւղացիների կողմից Լէբէդեվ Իվան Ալէքսանդրօվիչ—անկուսակցական, ձախակողմեան, հաշտարար դատաւոր, քահանայի որդի, աւարտել է Դեմիդովսկի լիցէյումը. Միխայլօվ Գրիգորիյ Սիմէնօվիչ—յարված է սահմանադիր-ռամկավարներին, գիւղացի, վերջացրել է շինական դպրոց, ռուս ուղղափառ։

Աստրախանի նահանգում, գիւղացիների կողմից Բէլեաեվ Վասիլիյ Անդրէևիչ, աշխատաւորական, ռուս, ուղղափառ, առևտրական, վերջացրել է քաղաքային դպրոց։

Վիլենսկի նահանգում, Վէնսլավսկի Միխայիլ Անտօնօվիչ, ազգային, Վիլնայի քաղաքագլուխ, լեհ, կաթօլիկ. Վօրօնէժի կողմից—Շինգարօվ Անդրէյ Իվանօվիչ, սահմանադիր-ռամկավար, բժիշկ, ռուս, ուղղափառ։

Եկատերինօսլավսկի նահանգում, գիւղացիների կողմից—Նօսիկ Տրօֆիմ, անկուսակցական, ձախակողմեան, ռուս, ուղղափառ, Նովօմօսկովսկի գաւառի հողատէր. Կազանի կողմից—Կապուստին Միխայիլ Եակօվլէվիչ, հոկտեմբերականների կուսակցութեան լիդեր, առողջապահութեան պրոֆէսոր, բժշկապետ, ռուս, ուղղափառ, 60 տարեկան։

Կալուգայի նահանգում, գիւղացիների կողմից—Սօլլեկօվ Իվան Իվանօվիչ, միապետական, գիւղացի, ռուս, ուղղափառ. Քիշինեվի կողմից—Կրուշէվան Պաւէլ Ալէքսանդրօվիչ, միապետական։

Կիևի կողմից—գերապատիւ Պլատօն, միապետական, Չիգիրինսկի եպիսկոպոս, հոգևոր ճեմարանի ռեկտոր։

Մոսկվայի նահանգի կողմից, գիւղացիներից—Աֆանասեվ (Սմիրնօվ) Պետր, յարված է ձախակողմեաններին, հողատէր, ռուս, ուղղափառ, աւարտել է շինական դպրոց. Մոսկվայի կողմից—իշխան Դոլգորուկով Պավէլ Դմիտրիևիչ, վերջացրել է Մոսկվայի համալսարանը. Կիզեվէտտեր Ալէքսանդր Ալէքսանդրօվիչ, ազնուական, ռուսաց պատմութեան մագիստրոս, Մոսկվայի համալսարանի պրիվատ-դոցենտ. Մակլակօվ Վասիլիյ Ալէքսէևիչ, երդուեալ-հաւատարմատար, ազնուական, Տեսլէնկօ Նիկօլայ Վասիլևիչ, երդուեալ-հաւատարմատար, ազնուական. բոլոր չորսն էլ սահմանադիր-ռամկավարներ են, ռուս ուղղափառներ։ Բանւորների ներկայացուցիչները պահանջեցին 4 տեղից երկուսը իրանց տալ, երբ նրանց այդ բանը մերժվեց, բոլոր 19 բանւոր պատուիրակները հեռացան, հրաժարվելով քուէարկութիւնից և տալով գրաւոր բողոք։

Կօվէնսկի նահանգում — Գուդօվիչ, երդուեալ - հաւատարմատար, լիտօվցի, ծայրահեղ ձախակողմեան. Կուրսկի կողմից—Դօլժէնկօվ, սահմանադիր-ռամկավար, Դումայի նախկին անդամ, ռուս։

Պլօցկի նահանգում, երդուեալ-հաւատարմատար Կօնից, առաջադիմական, դեմօկրատ կաթօլիկ, և Բախանօվսկի, կալուածատէր, լեհ, նարօդնիկ։

Ռօստովի (Դօնի վրա) կողմից Աճէմեան — սահմանադիր-ռամկավար, երդուեալ-հաւատարմատարի օգնական, հայ։

Րեազանի նահանգի կողմից—Սօրօկին, անկուսակցական, ձախակողմեան, հողատէր։

Սարատովի կողմից—Բերէզին, աշխատաւորական, գրականագէտ, նահանգական վարչութեան ստատիստիքայի մասի կառավարիչ։

Սուվալսկի նահանգի կողմից—երդուեալ-հաւատարմատարներ Բուլատ, Լիտօվսկի—ազգային-դեմօկրատներ, և Լէօնաս։

Տաւրիչեան նահանգի կողմից—գիւղացի Շչերբակ, ձախակողմեան։

Տամբօվսկի նահանգի կողմից—գիւղացի Կիսելէվ, աշխատաւորական. Տուլայի կողմից—իսկական պալատական խորհրդական Վօրօնցով — Վէլիամինօվ, հոկտեմբերական, վերջացրել է ծովային կադետսկի կօրպուսը. Դումայի նախկին անդամ էր. Գէորգի Լվովը 46 ձայնով ընդդէմ 31-ի սևացաւ։

Խարկովի նահանգում,—գիւղացի Լօպատին, ձախակողմեան։

Դաղիստանի շրջանի կողմից—Սուլթանօվ և Կարատաշէվ, երկուսն էլ մահմեդականներ են, ձախակողմեաններ. Սևաստոպօլի կողմից—պրիվատ-դոցենտ Բօբին, սահմ.-ռամկավար, ռուս։

Էստլանդսկի նահանգում—գիւղացիական գործերի կոմիսար Իւրինե, արմատական, էստօնցի, բարձր կրթութեան տէր. Մուրդէն, արմատական, էստօնցի, գիւղատնտես և Պիարլէն, սօցիալ-դեմօկրատ, էստօնցի, մալեար։

Սարատովի նահանգի կողմից—գիւղացի Նօխին, ձախակողմեան։

Պետերբուրգի նահանգի կողմից—Լիպպիանով, ֆին, աշխատաւորական, Հէսսէն Վլադիմիր, պրիվատ-դոցենտ, կադէտ, հրէայ, Պետրօվ Իվան, սօցիալ-դեմօկրատ, բանւոր։

Սիմբիրսկի նահանգի կողմից—գիւղացի Երոխին, բժիշկ Կարաուլօվ, ուսուցիչ Ջերին, մօլլա Նեմեդինով, հաշուապահ Միխայիլ Տաարինով, առևտրական Ալէքսանդր Կուզնէցով, բոլոր 6-ն էլ յարված են սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան։

Ստաւրոպօլի նահանգի կողմից—գիւղացի Եփրեմօվ և Կարէլին, ձախակողմեաններ։

Սեդլեցկի նահանգի կողմից — Դումայի նախկին անդամ Բլյակօշ և Բրենդգցկի, ազնուական երկուսն էլ նարօդնիկներ են և երդ.-հաւատարմատար Սուրդէբլյանտ, լեհ, առաջադիմական, ազգային. Տաշկէնդի կողմից—Նալիվկին, կադէտ, խոր. պալ. խորհրդական, նախկին փոխ-նահանգապետ, երկրի աչքի ընկնող հետախոյզներից մէկը։

Տվէրսկի նահանգի կողմից—Դումայի նախկին անդամներ Կուզմին-Կարավաևը և Ռօդիչէվ, երկուսն էլ կադէտներ են, Բօզժանօվ, բանւոր, սօցիալ-դեմօկրատ, Կուզնեցօվ, գիւղացի, աշխատաւորական, Բեկօվ, աշխատաւոր զեմստվային բժիշկ, Բակունին, երդուեալ-հաւատարմատար, Դեմեանօվ, ժողովրդական սօցիալիստ, Տօլմաչևսկի աշխատ., գտնվում է աքսորում, մի այլ թղթակցի տեղեկութիւններին նայած Տօլմաչևսկին, Բօզժանովը, Կուզնեցովը, Բեկօվը և Դեմեանովը սօցիալ-դեմօկրատներ են։

Թիֆլիսի նահանգի կողմից—Արչիլ Ջափարիձէ, հրապարակախօս, Սավլերիան Ջուգէլի, գրականագէտ և Կացիաշվիլի, գիւղացի, բոլորն էլ սօցիալ-դեմօկրատներ են. Թիֆլիսի կողմից—Զօհրաբեան Արշակ, սօցիալ-դեմօկրատ։

Տերսկի շրջանի կազակների կողմից—հարիւրապետ Կարաուլօվ, միապետական, դեմօկրատ, համալսարանաւարտ, Տերսկի շրջանի այլ ազգութիւնների կողմից—բժիշկ Գուլբեանօվ, Դումայի նախկին անդամ, Էլդէրխանօվ, չէչէն, երկուսն էլ կադէտներ են։

Եարօսլաւի նահանգի կողմից—Լարօվ, չափաւոր անկուսակցական, գիւղացի։

Տուչկօվ, յարված է կադետներին, կամէր իւնկէր, գաւառական պարագլուխ Պուշաժնիկօվ, անկուսակցական ձախակողմեաններ, Վասլին, յարված կադետներին։

Լիւբլինսկի նահանգի կողմից—Դումայի նախկին անդամներ Նամյոտեցկի, Գէմպէլ, Կլիմանսկի, Սլավինսկի, ազնուականներ, Ժակ—գիւղացի, բոլորն էլ նարօդնիկներ են։

Կուրլենդսկի նահանգի կողմից—Բուրկէվի, չափաւոր առաջադիմական, լատիշ. հասարակական գործիչ։

Սեմիռեչեան նահանգում, Գերուս, սօցիալ-յեղափոխական, ուսուցիչ, գիւղացի. Շիրսկի—սօց.-դեմ., երդ.-հաւատարմատար, ռուս։

Դօնեան Զօրաց շրջանի կողմից—Ուշակօվ Իվան, կօզակ, ուսուցիչ, անկուսակցական։

Օրլօվի նահանգում—Ստախօվիչ Միխայիլ, Դումայի նախկին անդամ, խաղաղ վերանորոգչական, գիւղացի. Կարգօվ, անկուսակցական։

Բեսարաբեայի նահանգի կողմից—Մելէնչուկ, գիւղացի, միապետական։

Կալուգայի նահանգի կողմից—Տերէգէմիկօվ, միապետական, գաւառական վարչութեան նախագահ. Շէպէլէվ, միապետական. Շեշմենցէվ, հոկտեմբերական, գիւղացի Սօրօկին, աջակողմեան։

Վլադիմիրսկի նահանգի կողմից—Սխաւնէկօվ, առաջադիմական, Իօրդանսկի—կադետ, փաստաբան։

Վիլնայի նահանգում - Կէլէնկօ, գիւղացի, անկուսակցական, քահանայ Բօգդէվիչ, կոմս Լաւրէնտովանոս Պուսլաւսկէր, Մէլօվսկի, Վանկօվիչ, վերջին 4-ը չափաւոր նացիօնալիստներ են, ազնուականներ։

Վարշավայի նահանգի կողմից-քահանայ Գրալէվսկի, Գրաբսկի, Գլօբանցկի, Կովցա, Պլսօվսկի—բոլորն էլ նարօդնիկներ են։

Վօրօնէժի նահանգում, գիւղացի Կուզնեցօվ, կադէտ։

Կուբանի շրջանում, Բաուժ, Դումայի նախկին անդամ, սահմ. ռամկավար. Կուբեանցէվ, առաջադիմական, բժիշկ, Շչեպբինա, ստատիստիկ, մօտ է աջակողմեաններին, գիւղացիներ. Բուրմէյստէր, աջակողմեան, ազնուական Դէմշա Հէնրիխ, Բէնիսլավսկի Դանիայի հիւպատոս Պետերբուրգում, երկուսն էլ լեհ նացիօնալիստներ են. Կայբէշ, լատիշ, չափաւոր, առաջադիմական։

Րեազանի նահանգում, — Սալալկին, բնական գիտութիւնների կանդիդատ,

Ամազին, առևտրական, Բօզդանօվ, քաղաքային վարչութեան անդամ,

Ուսպէէնսկի, սանիտարական բժիշկ, բոլորն էլ ձախակողմեաններ են, անկուսակցականներ։

Կիևի նահանգում, Նէչի Պախօ, գիւղացի, ձախակողմեան։

Գանձակի նահանգի կողմից-Խասմամէդօվ և Խօյսկի Ֆաթալի-խան, երկուսն էլ կադէտներ են, դատաւորի օգնականներ և Տէր-Աւետիքեան, դաշնակցական։

Բագուի կողմից, Իզմայիլ Թաղիէվ, մահմեդական, առաջադիմական, յայտնի միլիօնատէր Թաղիէվի որդին։

Կալիժսկի նահանգում Կարչէվսկի Ալֆօնս, երդուեալ-հաւատարմատար Սուխորժէվսկի Յօզէֆ, կալուածատէր. Վէռեէլօվսկի Ստանիսլաւ, քահանայ, բոլորն էլ ազգային դեմօկրատներ են, լեհեր. Կարչէվսկին և Սուխորժէվսկին Դումայի նախկին անդամներ են։

Կօվէնսկի նահանգում երդ. հաւ. Աբրամսօն, սահմ. ռամկ. հրէայ, գիւղացի Կուբօտաս, ձախակողմեան, լիտօվցի, երդուեալ-հաւատարմատարի օգնական Ստարչինսկի, անկուսակցական, լիտօվցի, ձախակողմեան, Կումէլիս Պավէլ, ձախակողմեան, լիտօվցի, Պօվէլիս, ձախակողմեան, լիտօվցի։

Քութայիսի նահանգի կողմից—Ցերէտելի Իրակլի, Դումայի նախկին անդամ, Բախտաձէ Գերասիմ, Լօմթաձէ Վիկէնտիյ, բոլորն էլ սօցիալ-դեմօկրատներ. վրացիներ։

Կելեցկի նահանգի կողմից Դումայի նախկին անդամ երդ.-հաւ. Նարոնսկի, կոմս Հէնրիխ Ռօդրիգօվիչ Պոտօցկի, Եան Բէլիավսկի, գիւղացի, բոլորը նարօդնիկներ են։

Մոսկվայի նահանգի կողմից—Չելնօկօվ, նահանգական վարչութեան անդամ, Գօլօվին, Մոսկվայի նահանգական զեմստվային վարչութեան նախագահ, երկուսն էլ սահմ.-ռամկավարներ են. գիւղացի Գուբարէվ և Մարէվ, երկուսն էլ սօցիալ-դեմօկրատներ են. գիւղացի Կեմերիկով, ձախակողմեան։

Լիֆլանդիայի նահանգում—գիւղացիներ Իւսդէնշտէյն Անտօն, Տրէյման Էդուարդ, Կարկլին Կարլ, Պարրօս, գիւղացիական դատարանի նախագահ, բոլոր 4-ն էլ առաջադիմականներ են։

Լօմժէնսկի նահանգի կողմից—Դումայի նախկին անդամ գիւղացի Գարուսէվիչ և Սկրամժինսկի Մեչէսլաւ, երկուսն էլ նարօդնիկներ։

Նովգօրօդի նահանգում — Իզմայլօվ Պետր, գիւղացի, նախկին ուսուցիչ, սահմ.-ռամկ. ձախ.։

Պենզայի նահանգի կողմից—Տեբէխին, ծայրահեղ ձախակողմեան, գիւղացի։

Պետրօկօվսկի նահանգի կողմից—Իսախնա և Ժիւրմինսկի, գիւղացիներ. Վլադիսլաւ Ժուկօվսկի, լեհական ինժեներ, Պեպլօվսկի Էդուարդ, տեխնոլոգ, Պօտօցկի Ֆիլիպեան, կալուածատէր։

Ռադոմի նահանգի կողմից Դումայի նախկին անդամ Օստրօվսկի, կալուածատէր, Բէլինսկի, երկուսն էլ նարօդնիկներ են. Դէմբինսկի Հէնրիխ, ռէալ քաղաքականութեան հետևող։

Սմօլէնսկի նահանգում Խոմեակօվ, Պետական Խորհրդի անդամ, Օպօչինին ազնուականութեան պարագլուխ, Տանէէվ, նահանգական վարչութեան մշտական անդամ «Սմօլէնսկ» լրագրի խմբագիր, բոլորն էլ հոկտեմբերականներ են, համալսարանաւարտներ. Կրասնօշչէկօվ, քաղաքային ատեան վաճառական, միապետական, Կուզնեցօվ, գիւղացի, անկուսակցական, աջակողմեան, Ֆէօդօրօվ, հողատէր, աջակողմեան, բոլորն էլ ռուսներ են, ուղղափառներ։

Կազանի նահանգի կողմից—Տաչանցեվ, վաճառական, համալսարանաւարտ, Պէպլօւխին, գիւղացի, աշխատաւորականներին համակրողներ, ուղղափառներ, Կուզնիկօվ, բժիշկ, ուղղափառ, Մաքսուդօվ, գիւղացի, մահմեդական, բարձր կրթութիւն ստացել է Սօրբօնի համալսարանում. երկուսն էլ սահ.-ռամկ. են. Բատտրօվ, ուղղափառ, Ֆէօդօրօվ, Զուևաշ, ուղղափառներ, անկուսակցականներ, ձախակողմեաններ, գիւղացիներ. Մուսին, մօլլա, միջնակարգ կրթութեամբ. Բաղամշին, աշխատաւորական, Դումայի նախկին անդամ, գիւղացի։

Մինսկի նահանգի կողմից — Մէնիկ, ուղղափառ, հողատէր. Եակօբօվիչ, քահանայ. Շիմանսկի, գիւղացի, հողատէր. Գաւրիլչիկ, գիւղացի, բոլորն էլ յարվում են հոկտեմբերականներին. Լօչկարէվ, պաշտօնաթող գնդապետ, ուղղափառ. Իվաշէնկօ Իվան Սամօյլօվիչ, դատական խորհրդական, ուղղափառ, Պետերբուրգի (?) վերաստուգիչ մասնաժողովի նախագահ Գրուշեվսկի, շրջանային գրագիր, բոլորն էլ հոկտեմբերականներ են. Բէմէնչիկ, գիւղացի, ուղղափառ, անկուսակցական, աջակողմեան. Կրէսկօվսկի, անկուսակցական, ազրար հարցում յարվում է աշխատաւորականներին։ Անցաւ ռուս նախընտրական կոմիտէի թեկնածուների ցուցակը 70 ձայնով ընդդէմ 50-ի։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 փետրվարի։ Բագու, Կուրսկ, Օրէօլ, Ռօստով (Դօնի վրա), Տաշկէնտ, այն քաղաքների հետ միասին, որոնց մասին հաղորդված էր փետրվարի 1-ին հեռագրով, ընդամենը 17 հատ, որոնք ընտրելու են առաջին պատուիրակներ, վերջինները բաժանվում են այսպէս, ազգայնականներ՝ 78 հոգի, միապետականներ՝ 181 հոգի, չափաւորներ՝ 132 հոգի, ձախակողմեաններ՝ 1049, որոնցից 617-ը սահմանադիր-ռամկավարներ են, 148-ը սօցիալ-դեմօկրատներ, 163-ը սօց.-յեղափոխականներ։

Սենատը փոխեց Ցարսկօէ Սելօի և Նովգօրօդի և Մինսկ քաղաքների ընտրութիւնները։

Պատուիրակների ընտրութիւնները։ Մինչև փետրվարի 5-ին ընտրված 6019 պատուիրակներից 1416-ը միապետականներ են, 900-ը՝ չափաւորականներ, 3526-ը՝ ձախակողմեաններ, 499-ը՝ ազգային կուսակցութիւններից, 392-ը՝ անկուսակցականներ և 276-ը՝ անյայտ կուսակցութիւնների պատկանողներ։

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ

«Արարատ» պաշտօնական ամսագրի 1906 թ. դեկտեմբեր ամսվայ գրքում կարդում ենք Վեհափառ Կաթողիկոսի հետևեալ կոնդակները՝ ուղղեալ և Էջմիածնի Սինոդի—անունով։

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ....

Գերաշնորհ Տէր Գէորգ Արքեպիսկոպոսի նախագահի Սինոդի և Տեղապահի մերոյ հայրապետական Մայր Աթոռոյս Հայրապետական օրհնութեամբ յայտ առնեմք։

Վասն տալոյ մի օրինակ ընթացս գործոց դիւանատան Մերոյ և Սինոդի Ս. Էջմիածնի, այսու կոնդակաւ Մերով պատուիրեմք Գերաշնորհութեան Ձերում զամ մի յիւրաքանչիւր եօթնեկի՝ յաւուրս հինգշաբթի, ի միասին ընդ միւս անդամս Սինոդի յաճախել ի դիւանատուն Մեր ի խորհրդածութիւն ընդ Դիւանապետի յաղագս կարևոր խնդրոց և գործոց. իսկ ի դէպս արտաքոյ կարգի և անյետաձգելի խնդրոց ունիմ հրաւիրել ի ձեռն Ձերդ Սրբազնութեան զնոսա ի ժողով և յայլ աւուրս շաբաթու։

18 դեկտ. 1906 ամի
ի Ս. Էջմիածին
Թ. 1647

—

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ....
Սինոդի Սրբոյ Էջմիածնի

—

Ի նկատ առեալ մեր զանձուկ վիճակ Մայր Աթոռոյս, զպարտիս հաստատութեանց նորա զ30,000 ր. նաև զհատուցանելիս Նպաստաժողովոյ Յանձնաժողովոյն զ20,000 ռուբլիս, հարկ անհրաժեշտ համարիմք առնել զհետևեալ կարևոր փոփոխութիւնս։

Ա. Բառնալ զսեղանատուն, զփուռն, զմառանատուն, զխոհանոցն ի 16 էն յունվարի, արձակելով ի նոյն ժամանակէ զամենայն ծառայս, որք են ի դոյն հաստատութիւնս, տալով նոցա յամսոյ յամիս զռոճիկս յունուար, փետրուար և մարտ ամսոյ։ Մեն մի միաբանի ի փոխարէն սննդեան տալ ի սկզբան իւրաքանչիւր ամսոյ անմիջապէս զքսանական ռուբլիս և յայնմ հետէ ճեմարանն ընկալցի ալիւր, զոր ունի պատրաստել ի փռատան վանուցս միջոցաւ խմորել հաց ի պէտս աշակերտաց։ Աշակերտք, որք բնակին ի հիւրատան Մայր Աթոռոյս, ունին ստանալ ճաշ ի սեղանոյ ճեմարանի մինչև ցվերջ մայիսի յառաջիկայ 1907 ամի։ Վանական կառավարութիւն ստուգելով զցուցակս «Թայինն» ստացողաց և որք կարօտ են հացի և կերակրոյ, տայ նոցա դրամական նպաստ։

Բ. Զգոմատունն բարեկարգել այսպէս. Թողուլ զ12 ձիս վասն կառաց, սայլի և հեծանելոյ. վասն գութանի 8 գոմէշս և 4 եզինս և երկս կաթնատու կովս Վեհարանի մի միայն, իսկ զմնացեալ անասունս ի վաճառ հանել ի մարտ ամսոյ։ Ունել զ3 ծառայս և զ3 կառապանս։

Գ. Վասն ճեմարանի սահմանեմք՝ սկսեալ ի 1907 ամէ ունել որդեգիրս մի միայն 100 թոշակ որդեգիր—թոշակաւորաց, որք խնամեսցին նպաստիւք բարերարաց, իսկ մնացեալ աշակերտք լիցին երթեկք։ Կարգ և ձև ընդունելութեան երթեկաց և որդեգրաց թողումք ի վերայ մանկավարժական ժողովոյն ճեմարանի, որ պարտի տալ ի տնօրինութիւն Մեր զտեղեկագիր մինչև ց1-ն ապրիլի առաջիկայ ամի։

Դ. Տալ զտպարանն կապալաւ ցանկացողի և պատուիրել Մխիթար վարդապետի որոնել կապալառու և ի ձեռն Սինոդիդ կնքել պայմանս ընդ նմա։ Յետ առնելութեան տպարանին ի վարձու զգրեանս պահելու անդ մանրամասն ցուցակաւ յանձնել միում ի միաբանից պահել յապահով տեղւոջ վասն ի վաճառ հանելոյ ցանկացողաց։

Ե. Պատուիրել Վանակ. Կառավարութեան նախ՝ զկնի փակման սեղանոյ և պարագայից ի վաճառ հանել զպատրաստ նիւթեղէնս ի վերայ միաբանից, իսկ ի դէպս ոչ ցանկալոյ նոցա ի վերայ այլ ցանկացողաց, երկրորդ՝ կազմել մանրամասն ցուցակս ամենայնակ անօթոյ, գործեաց, կահ կարասեաց սեղանատան, փռատան և մառանատան և պահել անկորուստ ընդ հսկողութեամբ Վանական Կառավարութեան։ Իսկ վասն ճեմարանին անօրինել զարժանն։

Զ. Հիւրոց ի հիւրատան տալ մի միայն ինքնաեռ, սենեակ և ծառայ. պատուիրել հիւրընկալին առաջի առնել ց-5 յունվարի մանրամասն ցուցակ կահկարասւոյ, սպասուց, կեղինաց և անկողնոյ ի հայեցողութիւն Սինոդի։

Է. Վասն անկեան Վեհարանի վարել ըստ վերոյիշելոյն. այն է կարճել զծախսութիւն նիւթեղինաց և տալ անմիջապէս ըստ վերոյգրեալ չափու առանձին հաշուեմատեանս, որ ստուգեսցի յամսոյ յամիս ի Սինոդին ընդ այլ մատեանս վանական հաստատութեանց։

Ը. Վասն անկեան Տաճարի ծառայողաց վարել ըստ վերոյիշելոյն, տալով մառանն առանձին Տաճարի, յոր մտցի հաշիւ մոմավաճառութեան գանձակի, նուիրաբերմանց Թանգարանից և անմիջաբերմանց, որպիսի մատեանն ստուգեսցի ի Սինոդին ընդ այլ մատեանս յամսոյ յամիս։

Ի 27 դեկտեմբերի 1906 ամի
և ըստ տոմարիս ՌՅԾԶ
ի Հայրապետութեան մերում ԺԴ. ամի
Այրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ
Թ. 1734.

ԹԻՖԼԻՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

I

Փետրվարի 6-ին քաղաքային դումայի դահլիճում Թիֆլիսի ներկայացուցչի ընտրութիւն էր կատարվում։

Ներկայ եղող հանդիսականների անհամար բազմութիւնը ականատես էր կուսակցական այնպիսի տգեղ ու անվայել ձևերի, որի մասին նա ճիշտ գաղափար չունէր և դժուարանում էր երևակայել անգամ։

Ընտրողական պայքարի ժամանակամիջոցում այն բոլոր սխրագործութիւնները, ինչ որ կատարվել էին Թիֆլիսի փողոցներում, փոխադրված էին այդ օրը իրանց լիակատար ձևերով դումայի դահլիճը։

Պէտք էր ականատես լինել ճանաչելու համար այն անձանց, որոնք Թիֆլիսի ազգաբնակութեան կողմից վստահութեան քուէ էին ստացել, և բազմել պատուիրակների աթոռի վրա։

Լաւ կը լինէր այդ ընտրողները իրանք տեսնէին իրանց տուած քուէների արդիւնքը. տեսնէին և հիասթափվէին։

Փողոցը իր լպիրշ հայհոյանքներով, իր կոպիտ բռունցքներով և խուլիգանական գործելակերպով ու խօսելակերպով մտել էր իր ամբողջ այլանդակութեամբ։

Չէր կարելի անտարբեր մնալ ու ցաւ չը զգալ մեր երիտասարդութեանը, մեր ապագայ ազատ հայրենիքի քաղաքացիներին տեսնելով անկման ու մոլորութեան ճանապարհի վրա. չէր կարելի չը կարմրել կուսակցութիւնների այն ղեկավար գործիչների փոխարէն, որոնք յաւակնութիւն ունեն երիտասարդութեան դաստիարակները կոչվելու։

Մինչև մեր կեանքը այնքան է անկենդանակ դարձել, ամայացել, որ այդպիսի գծուծ, մանրացած գործիչները պէտք է տնօրինեն ժողովրդի բաղդը և ուղղութիւն տան մեր երիտասարդութեանը։

Այդ կսկծեցուցիչ փաստը պէտք է ուշադրաւ լինի հասարակական այն գիտակից ույժերի համար, որոնք անտարբեր մնալ չեն կարող դէպի երկրի ներկայ դրութիւնը, դէպի մեր երիտասարդութեան անբարոյականացումը։

II

Այդ օրը երկու կուսակցութեան ներկայացուցիչները բազմել էին իրար մօտ՝ կողք կողքի։

Նիստը շարունակութիւն էր կազմում նախորդ օրվայ։ Կուսակցական ճառախօսները աշխատում էին իրար խեղդել, իրար քաղաքական դասեր տալ. դրկցին խօսք Աւստրիան, Գերմանիան, Ֆրանսիան։

Բրբռեցին բուրժուազիային, կադետներին և ամեն մէկը աշխատում էր միւսից աւելի սուր հայհոյանքներ տալ նրանց հասցէին։

Շահումեանը կադետներին գզելուց յետոյ՝ հերթը անցնում է իսկական հակառակորդներին—«փոքրամասնական» սօցիալ-դեմօկրատներին։

Դաշնակցականների լիդերները շանթեր են արձակում «տեղական» սօցիալ-դեմօկրատիայի վրա, նրանք «մօշէնիկներ» են, «չօվինիստներ» են, նրանք պրօլետարիատի շահերի պաշտպան լինել չեն կարող, նրանք մի «որոշ» մասի միայն ներկայացուցիչներ են, նրանք կադետներ են, և այլ բազմաթիւ հայհոյանքներ, այն էլ ինչպիսի աղմկալի ձայնով արտասանած։

Աղմուկ է սկսվում պատուիրակների շարքերում «սուտ է պրօվօկացիա է, փաստեր տուէք»։ Հասարակութեան մէջ նկատվում են զայրոյթի արտայայտութիւններ որոշ մասում, իսկ ցաւակցութիւններ, հիասթափումներ մի այլ մասում։

—Ահա ձեզ փաստեր. հայ բանւորները կեղեքվում են և վռնդվում երկաթուղու արտելից, քաղաքային գործադուլների միջից։

Ժողովրդի մի մասը սուլում է, միւսը ծափահարում. Բայց մի րոպէից յետոյ նախագահի զանգը լռութիւն է հրաւիրում և յուզված կրքերը ուշքի են գալիս, որ խօսքի, համոզմունքների, խղճի ազատութեան և վայելչութեան սկզբունքները ոտնահարված, խոնարհված են։

Ներս է մտնում քաղաքագլուխը։

III

Քաղաքագլուխը նիստը բացված է յայտարարում և առաջարկում է հասարակութեանը մաքրել դահլիճը, որովհետև քուէարկութիւն պիտի լինի։

Ժողովուրդը դժկամակութեամբ մէկ-մէկ, իրար նայելով քաշվում է դէպի դուռը, բայց խռնվում դրան առջև։ Ոմանք էլ խռնըվում են մամուլին յատկացրած սեղանի շուրջը։

—Դուք նոյնպէս դուրս գնացէք, մամուլի ներկայացուցիչներ։

Վերջինները սկսում են բողոքել, տեղներից չեն շարժվում, առարկելով, որ անցեալ տարի պ. քաղաքագլխի, իր նախագահութեամբ կատարված ընտրութեան ժամանակ մամուլի ներկայացուցիչները դուրս չը գնացին, ինչու այժմ մամուլը պէտք է զրկվի այդ իրաւունքից։

—Պարոններ, դուրս գնացէք, կարող են բեկանել ընտրութիւնը—լսվում է նորից քաղաքագլխի հրամայողական ձայնը։

Քաղաքի «սօցիալիստ» պատուիրակներից էլ են լսվում ձայներ, «դուրս գնացէք»։

Մամուլի ներկայացուցիչներից ոմանք առարկութիւններ են անում քաղաքագլխի այդ հրամանի դէմ և բողոքում պատուիրակներին։

Բայց պատուիրակները չը յարգելով ու նշանակութիւն չը տալով հանդերձ այդ բողոքին, առաջարկում են հեռանալ։

Մամուլի ներկայացուցիչները հեռանում են իրանց տեղերից հիասթափված։

IV

—Մենք ձեր թեկնածուին ձայն չենք տալու,—յայտնում են դաշնակցականները սօցիալ-դեմօկրատներին։

Սկսվում է քուէարկութիւնը։

Ընտրվում է Ա. Գ. Զօհրաբեանը 52 սպիտակ և 25 սև քուէով։

Քուէարկութեան հետևանքը ընդունվում է բուռն ծափահարութեամբ մի մասի կողմից, իսկ սուլոցներով միւս կողմից։

Պատուիրակներից Նոյ Ռամիշվիլին կարդում է սօցիալ-դեմօկրատիայի կազմած նակազը իր ընտրած Պետական Դումայի անդամին, որով առաջարկում է հաւատարիմ մնալ սօցիալ-դեմօկրատիայի ծրագրի մէջ յիշատակված պահանջներին։

Դրանից յետոյ ամբիոն է բարձրանում Պետական Դումայի նորընտիր անդամը։ Ծափահարութիւնները վերսկսվում են։

Հանդարտութիւն տիրելուց յետոյ պ. Զօհրաբեանը սկսում է իր ճառը։ Նա իրան տուած պատիւը վերագրում է սօցիալ-դեմօկրատիային։ «Նա յաղթութիւն տարաւ անցեալ տարի էլ, բայց այս տարի աւելի է նշանակալից այդ յաղթութիւնը, որովհետև Ստօլիպինի հրահանգները ստեղծեցին աննպաստ պայմաններ, միևնոյն ժամանակ անցեալ տարի դաշնակցականները բօյկօտ էին արել, իսկ այս տարի մասնակցում էին և պարտվեցին։ Մանր-բուրժուազիան, նոյն իսկ Սօլօլակը ձայնակցեց նրանց և գերադասութիւն տուեց մեզ, նա գերադասեց մեր տակտիկան՝ դաշնակցականների կեղծ դեմօկրատութիւնից»։

Այդ մի անտակտ խօսքը բաւական էր բորբոքված կրքերը պոռթկացնելու համար։

Բարձրացան բռունցքներ, թափվեցին փողոցային յիշոցներ և աղմկալի սուլոցների ու ցոյցերի տարափի տակ,—որոնց ստեղծելու և բորբոքելու տխուր դերը տարօրինակ պատահականութեամբ միշտ էլ վիճակվում է զօլի Թաժակին,—Նորընտիր պատգամաւորի ձայնը խեղդվեց և նիստը փակվեց։

Հանդիսականները մեծ դժգոհութեամբ ցըրվեցին ժամի 2 1/2-ին։

Աշխատակից

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԸ

Անցեալ անգամ տուինք Թիֆլիսի պատգամաւոր Ա. Զօհրաբեանի կենսագրութիւնը, այսօր տալիս ենք Մախարաձէի և Ջափարիձէի կենսագրութիւնը։

II

Գերասիմ Ֆօմիչ Մախարաձէն ծնվել է 1881 թ-ին Քութայիսի նահանգի Օզուրգէթ գաւառի Շէմօկմէդի գիւղում։

Նա իր միջնակարգ կրթութիւնը ստացել է Քութայիսի հոգևոր սեմինարիայում, ուր աւարտել է իր ուսումը 1901 թ.։

Սեմինարիայի վարչութեան առաջարկը—հոգևոր վարչութեան ծախսով գնալ հոգևոր ակադեմիան—Մախարաձէն իր ժամանակին գրական կերպով մերժել է։ Միևնոյն տարում քննութիւն բռնելով նա հեռանում է սեմինարիայից և գնում Պետերբուրգ, մտնում այդ քաղաքի համալսարանի Արևելեան լեզուների ֆակուլտետը։

1903 թ-ի մարտի 24-ին ձերբակալվում է Մախարաձէն Պետերբուրգում։ Նա մեղադրվում էր «Պետերբուրգի համալսարանին կից եղած Սօցիալ-դեմօկրատական խմբին» պատկանելու մէջ։ Նոյն տարվայ յունիսի 16-ին ազատվում է նախնական բանտարկութիւնից և Պետերբուրգի սահմաններից դուրս քշվում ոստիկանութեան հսկողութեան տակ։ Նոյն տարվայ սեպտեմբերին (մինիստրի թոյլտուութեամբ) մտնում է Իւրևեւի համալսարանը։ 1904 թ. փետրվարի 20-ին նորից է ձերբակալվում «որպէս խռովարար»։ Նա այդ ժամանակ մասնակցում է փետրվարի 19-ի դեմօնստրացիային։ Նա միաժամանակ մեղադրվում է նաև տեղական «միութեան խորհրդին» մասնակցելու համար։ Բանտարկութեան մէջ ստանում է ոստիկանական դեպարտամենտի մեղադրական ակտը Պետերբուրգի գործի վերաբերմամբ (3 տարվայ ոստիկ. հսկողութեան)։ Սեպտեմբերի 16-ին ազատվում է բանտարկութիւնից և հեռացվում այնտեղից։ Այդտեղից նա գալիս է Կովկաս գործելու համար։ Նրա յեղափոխական գործունէութիւնը մասնաւորապէս զգալի արդիւնքներ է տալիս Թիֆլիսում, Գուրիայում և Բաքւում։

Գերասիմ Ֆօմիչ Մախարաձէն իր ամբողջ գործունէութեան ընթացքում աչքի է ընկել մտաջան գործունէութեամբ և օրինակելի համեստութեամբ՝ իր արժանիքը չցուցադրելու մէջ։

Ընտրելով 25 տարեկան Մախարաձէին՝ նրա քուէատուները մեծ յոյսեր են դրել նրա գործունէութեան վրա։

(«Հօսանք»)

III

Թիֆլիսի նահանգի Գօրու գաւառի կալուածատէրերի ժողովի կողմից Պետական Դումայի համար ընտրված պատգամաւորացու Արչիլ Լևանովիչ Ջափարիձէն, 28 տարեկան, ծնվել է 1879 թ-ին Գօրու գաւառի Փլաւի գիւղում։ Նա կրթութիւն է ստացել Թիֆլիսի 2-րդ գիմնազիայում և 1899 թ-ի աւարտել է արծաթեայ մեդալով։ Կրթութիւնը շարունակելու նպատակով նա անմիջապէս գնում և մտնում է Մոսկվայի համալսարանի մաթեմատիկական ֆակուլտետը, ուր հազիւ է կարողանում իր խաղաղ աշխատանքը շարունակել մինչև վերջ 1901 թ-ին, ուսանողական խլրտումների ժամանակ, Ջափարիձէն, որպէս յեղափոխական նորէն տրամադրված բնաւորութիւն, ակտիվ մասնակցութիւն ունեցաւ այդ խլրտումներին և ուրիշ ընկերների հետ միասին վռնտվեց համալսարանից որպէս «խռովարար»: Նրան ուղարկում են Կովկաս, ուր նա, համաձայն ոստիկանական վարչութեան վճռի, ստիպված է լինում խիստ հսկողութեան տակ ապրել մօտ երկու տարի։ Այս վերջին հանգամանքը, սակայն, չի կարողանում կաշկանդել Ջափարիձէին, և նա, իր ուժերի ներածի չափով, մասնակցում է Թիֆլիսի սօցիալ-դեմօկրատական կազմակերպութեան աշխատանքներին: 1903 թւին նա գնում է արտասահման թէ իր կրթութիւնը շարունակելու և թէ յեղափոխական կուսակցութիւնների թէօրետիկական հետ աւելի մօտից ծանօթանալու համար: Նա հէնց այդ թւին էլ վերջնականապէս մտնում է սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան մէջ, որպէս ակտիվ գործող անդամ, և ապա վերադառնում է Թիֆլիս, ուր նա ոչ միայն տեղական կազմակերպութեան մէջ է սկսում եռանդուն գործունէութիւն ցոյց տալ, այլև Թիֆլիսից դուրս—գաւառներում, Քութայիսի նահանգում։ Գուրիան, Քութայիսն ու մի քանի այլ գաւառներ առանձին համակրութեամբ են վերաբերվել Ջափարիձէի տոկուն աշխատանքներին. Ջափարիձէն սկսում է նրանց մէջ փայլել որպէս թէօրետիկ: Նա պակաս դեր չէ խաղացել և կուսակցական մամուլում իր լաւատես յօդուածներով:

Արչիլ Լևանովիչ Ջափարիձէն 1905 թ. յունվարի 25-ին Թիֆլիսում ձերբակալվում է որպէս խռովարար և բանտարկվում Մետեխում, ուր նա իր թոյլ առողջութեամբ տանում է բանտային երկու ամսվայ բոլոր նեղութիւնները:

Արչիլ Լևանովիչ Ջափարիձէի յեղափոխական բնաւորութիւնը կրած նեղութիւններից ոչ միայն չի ընկճվում, այլ և աւելի դրական է դառնում: Նա հէնց այդ բնաւորութեամբ էլ իր վրա է կենտրօնացնում ոչ միայն գործակից ընկերների, այլ և բոլոր այն տեղերի ժողովրդական մասսաների ուշադրութիւնը, ուր նա այս կամ այն չափով աշխատել է, մոռանալով իր հանգիստը, անգոր կեանքը:

Ջափարիձէի անձնանուիրութեան վճռական կամքը բարոյապէս վարձատրվեց այն վստահութեամբ, որով իրանց քուէները տուին նրան Գօրու ընտրողները:

Թէ Արչիլ Լևանովիչ Ջափարիձէն որքան կարդարացնի իրան ընտրողների և իր ընկերների յոյսերը—սրանում մենք ոչ մի կասկած չունենք:

Աւելի աջող ընտրութիւն չէր կարող տեղի ունենալ, քան թէ տեղի ունեցաւ յանձին Ջափարիձէի:

(«Հօսանք»)

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՒ ԼՈՒՐԵՐ

—«Освѣд. Бюро»-ն հաղորդում է, որ վերջին ժամանակներս ռուսաց և արտասահմանեան մամուլի մէջ լուրեր էին յայտնվել, որ անբերրիութիւնից վնասված նահանգների համար հացահատիկներ են առնված արտասահմանում:

Այդ մասին Ներքին գործերի մինիստրութեան զեմակի բաժանմունքը անհրաժեշտ է համարում յայտնել, որ այդ բոլոր լուրերը բոլորովին սխալ են. ոչ ուտելու և ոչ էլ սերմանցուի համար արտասահմանում հացահատիկներ չեն առնված, մտադրութիւն չը կայ առնելու և նոյնիսկ կարիք էլ չը կայ: («Тов.»)

—Օպպօզիցիայի յաղթութիւնները, մանաւանդ կադէտների տարած յաղթանակը Մոսկվայում, մեծ իրարանցում ու վհատումն է առաջ բերել բարձր շրջաններում: Մոսկվայի յաղթութեան լուրը ստացվելուն պէս Ստոլիպինը կանչվում է Ցարսկոյէ-Սելօ, որտեղից նա վերադարձել է խոժոռ և բաւականին անհանգիստ տրամադրութեան մէջ: Առհասարակ վերջին օրերս պրեմիերը Ցարսկոյէ-Սելօից վերադառնում է տխուր դէմքով և վատ տրամադրութեան մէջ: Երևում է, որ չափաւոր Դումա կազմելու խաբված յոյսերը օրէցօր աւելի են զգացնել տալիս իրանց ոչնչութիւնը. իսկ միւս կողմից ամբողջ անբաւականութիւնը ծանրանում է պրեմիերի վրա:

Մոսկվայի պարտութիւնից յետոյ, երբ Ստոլիպինը վերադառնում է Ցարսկոյէ-Սելօից, բիւրօկրատական շրջաններում լուր է տարածվում, որ նրան պարզապէս զգացնել են տուել, որ եթէ նոյնիսկ Դուման ցրելու էլ լինեն այնուամենայնիւ. այդ կանեն ոչ թէ ներկայ կաբինետը պահելու պատճառով, այլ աւելի ծանր ու լուրջ խնդրների համար:

(«Тов.»)

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ախալքալաք, յունվարի 30-ին

Ամսիս 27-ին կայացաւ քաղաքային ժողովարանի բնակարանում, յօգուտ հայոց ուսումնարանների գրական-երաժշտական երեկոյթը, որ բաղկացած էր երեք բաժնից: Սկզբից գործը կաղ գնաց խմբապետ պ. Ադամ Խախանեանցի հիւանդութեան պատճառով, որին փոխարինեց ուսուցիչ Յակոբ Տօնականեանը, որ մեծ դժուարութեամբ կարողացաւ գլուխ բերել երաժշտական մասը:

Գրական մասն էլ թէև կազմված էր ճոխ, ուր մտցրել էին մօտ 18-ի չափ բանաստեղծական և դաւեշտական ընտիր հատուածներ, բայց գրական մասում մի քանի մասնակցողների անփոյթ վերաբերվելու պատճառով անցաւ սպասածից թոյլ: Առանձնապէս աչքի ընկաւ օր. Ն. Այվազեանը Апухтинъ-ի «Сумасшедшій» ոտանաւորի ընթերցման մէջ, Յովհաննէս Բարսեղեանը Դուրեանի «Տրտունջ» ոտանաւորի և մի քանի դաւեշտական ընթերցուածքներում և Յակոբ Տօնականեան, Աւետիք Մաղաքեան և Արշալոյս Տէր Յակոբեանը, որոնք ինչպէս երևում էր, չէին ծուլացել սովորելու և զգացմունքով կարդալու յանձն առած ոտանաւորները:

Ընդհանուր մուտք եղաւ 304 ր. 8 կ., որից մաքուր օգուտ մնաց ուսումնարաններին 145 ր. 87 կ.: Առանձնապէս շնորհակալութեան արժանի է քաղաքային ժողովարանի վարչութիւնը, որ բարեհաճել էր ժողովարանի բնակարանը ձրի հոգաբարձութեան տրամադրութեան ներքոյ, ազատելով նրան բնակարան գտնելու ծանր հոգսից:

Էն-էն

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Սիսիան, յունվարի 22-ին

1903 թւականի սկզբում գիւղում ապրող մի խումբ երիտասարդների մէջ միտք է յղանում հիմնել մի փոքրիկ գրադարան-ընթերցարան, որից կարողանային օգտվել թէ իրանք, երիտասարդները, և թէ հասարակութեան միւս անդամները, և որովհետև այդ երիտասարդների մեծամասնութիւնը պատկանում էր «Դրագիտական Ընկերութեան», այդ պատճառով էլ որոշվում է գրադարան-ընթերցարանը անուանել «Դրագիտական Ընկերութեան գրադարան-ընթերցարան»:

Բնակութ գիւղում բացվում է երկրորդ կրթական հիմնարկութիւնը, ճիշտ է, չափազանց փոքրիկ, սակայն ապագայում մեծ յոյսեր խոստացող: Պարզ է, որ իւրաքանչիւր փոքր ի շատէ կրթված մարդ, պէտք է իր ամբողջ ուժը գործ դնէ այդպիսի մի հիմնարկութեան գոյութիւնը ապահովելու համար, բայց վիրաւորված ինքնասիրութիւնը ոչ թէ միայն թոյլ չէ տալիս այդպիսի բան անելու, այլ մինչև անգամ ստիպում է հակառակն անելու, աշխատելով ամեն քայլափոխում խոչընդոտ հանդիսանալ այդ հիմնարկութեան զարգացմանը:

Այն հանգամանքը, որ իրանք լինելով գիւղի ամենակարող Դաշնակցութեան ներկայացուցիչները, մի խումբ «ինչ որ երիտասարդներ» առանց իրանց գիտութեան այդպիսի մի գործի են ձեռնարկում, բաւական է լինում թշնամաբար տրամադրելու նրանց դէպի այդպիսի մի հիմնարկութիւն և իրանց վիրաւորված հասարակութեանը գոհացում տալու համար մեր պարոնները սկսում են հասարակութեան մէջ լուրեր տարածել, թէ այդ գրադարան-ընթերցարանը խուլիգանններինն է, թէ գործի գլուխն են կանգնած մի խումբ ագէտ և գող երիտասարդներ, և նրանցից ոչինչ լաւ բան չէ կարելի սպասել, և այլն, և այլն...

Այդ բաւական չէ, մեր «պարոնները» դիմում են Դաշնակցութեան աւելի բարձրաստիճան մարմնին, որոնք, խիստ միջոցներ ձեռք առնելով, պատժեցին գործի գլուխ անցած մի քանի երիտասարդների, որից յետոյ ամբողջ երկու տարի սահմանափակ գրութեան մէջ մնաց գրադարան-ընթերցարանը:

Վերջերս հէնց որ կառավարութիւնը խիստ միջոցների դիմեց և երկու հարևանների մէջ խաղաղութիւնը վերականգնեց, հէնց որ այդ ամենակարող դաշնակցական գործիչները հեռացան թէ գիւղից և թէ պաշտօնից, այն ժամանակ ջերմեռանդ ուսումնասէր երիտասարդութիւնը—նշանակութիւն չը տալով անցեալին, սկսեց գործել:

Այժմ գրադարան-ընթերցարանը նորից բացվել է, «Դրագիտական Ընկերութեան, Գրադարան-Ընթերցարան» անուան տակ:

Ահա թէ ինչ վտանգի մէջ է եղել Բնակութի Գրադարան-Ընթերցարանը—1904 և 1905 թւականներում:

Թ. Ա. Յակովբեան

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Փետրվարի 3-ին

Այսօր, շաբաթ, Բագուի փողոցներում սպանութիւններ են պատում: Դեռ առաւօտեան ժամի 10 ը չը կար, երբ Մերկուրեվսկի փողոցում մի պաշտօնեայի տեղն ու տեղը սպանեցին. սպանողները, ինչպէս միշտ, այս անգամ էլ անյայտացան, չը նայելով, որ բազմամարդ փողոցներից մէկն է այդ փողոցը և բաւական թւով թուրք խանութպաններ կան:

Ուղիղ ժամի 11-ին քաղաքի հարուստ թաղում, (Լալաեվի և Թաղիեվի պասաժի առջևում), ուր աչքի ընկնող վաճառականներն են, անյայտ մարդիկ մտնում են կարի մեքենաների «Զինգեր»-ի խանութը և «բուկի վերխ» ասելով՝ սարսափահար են անում այնտեղ ծառայող օրիորդներին և գործակատարներին: Չարագործները կասսայից վերցնում են մօտ երեք հարիւր րուբլի և թղթի մէջ փաթաթած՝ ինչոր կոլոր բան թողնում են ներսը:

Դէպքի վայրն է գալիս ոստիկանութիւնը, որ շրջապատում է թղթի մէջ փաթաթած կոլոր բանը, կարծելով թէ ռումբ պիտի լինի, որովհետև չարագործները այդ անում են սարսափեցնելու: Ինչպէս լսեցինք, երբ թուղթը պատռում են, տակը գտնում են բաւակ երկաթէ կոլոր կեղև: Եթէ «բուկի վերխ» անողները 10—15 րօպէ ուշ գային, 4—5 հազար րուբլի պիտի տանէին, որովհետև նրանք կարծած են եղել, որ կասսիրը բանկից վերադարձել է: Եւ այդ բանը ենթադրել է տալիս, ոստիկանութեան թէ ծառայողների և չարագործների մէջ ինչոր կապ կայ...

Ճաշից յետոյ, նոյն օրը, յայտնի ադամանդավաճառ հարուստ Մանգասարեանը իր վաճառատունը գալիս, Պարապետի հրապարակի մօտ անյայտ չարագործ մօտենում և երեք գնդակ է ուղղում, որից մէկը թիկունքին է կպչում, միւսը մէջքին, իսկ երրորդը ոտին:

Ինչպէս հաստատ աղբիւրներից իմացանք, 10 օր առաջ Մանգասարեանը նամակ է ստանում, որով անիշխանականները պահանջում են մի հազար րուբլի, Մանգասարեանը դիմում է Դաշնակցութեան և օգնութիւն խնդրում և պաշտպանելու համար պահապան զինւոր ստանում, որ բանին պահանջ անողներին: Սակայն անցնում են մի քանի օրեր և այդպէս մահացու վէրքեր են հասցնում խեղճին: Վիրաւորվածը յայտնել է, որ իրան խփողը հէնց պահանջի նամակ բերողն էր:

Վէրքը վտանգաւոր է. գիշերս օպերացիա պիտի անեն:

Երեկոյեան 7-ը ժամին անցնում էի ձիաքարշով Տէլեֆօննայա փողոցով, երբ լսվեցին ատրճանակի համազարկեր: Ստիպված եղայ յետ դառնալ, բայց ճանապարհին, Տարզովայա փողոցում աւելի վատ համազարկերի պատահեցի: Անմիջապէս խանութները փակվեցին, մարդիկ ցրվեցին ու փողոցները ամայի դառան:

Կա՞ն սպանվածներ թէ չէ, մանրամասնութիւնը հնարաւոր չեղաւ ստուգել:

Այժմ անցնենք թուրքական թաղին: Թուրքերն էլ սկսել են «բուկի վերխ» անելը:

Երէկ, մի քանի հոգի մտնում են թուրքական բաղնիս, ուղիղ այն ժամանակ, երբ բաղնիսի տէրը եկած կասսայատուից փող ստանալիս է լինում: Մտնում են թէ չէ «ալլիւղ իւխարը» (բուկի վերխ) ասելով՝ ատրճանակները ուղղում են: Իւրաքանչիւրի գրպանում եղած վերջին կոպէկը հանելով 300 րուբլուց աւելի փող են տանում: Դանից դուրս գալու ժամանակ բաղնիսի կասսայատուն ասում է, «զարար եօխտի, ման սիւզի թանիրամ», (վնաս չունի, ես ձեզ ճանաչում եմ), այդ խօսքերից յետոյ իսկոյն մի գնդակ են սեղմում ճակատից ու մի քանի էլ սպառնութիւններ անում: Չարագործները փողը վերցրած՝ գնում են:

Նոյն գիշերը և նոյն ժամին մի այլ «բուկի վերխ» անող խումբ, մի այլ բաղնիսից դուրս եկող թուրքերին շրջապատում է և կողոպտում վերջին ունեցածները:

Դրութիւնը մեզանում այդպէս է.

Թ. Մէժլումեան

ՈՐՆ Է ԻՐՈՂՈՒԹԻՒՆԸ

I

«Մշակի» № 21-ում պ. Ալաւերդեանը զետեղել է սօֆիզմի, խեղաթիւրումների ու զրպարտութիւնների մի երկար շարան: Պարոնի նման մենք ընդունակ չենք դիմելու ինքնայօրինման ու «կուլ տալու» միջոցների և սիւնակներ չենք լցնի յերիւրումների ու կուրացած կրքի թելադրութիւններով, որովհետև չունենք նրա տրամադրեան յիշողութիւնը, որ ամբողջ երեսներով արձանագրութիւնը ճշտութեամբ, առանց ապաւադրումների միտներս պահէինք և հասարակութեան առաջ դնէինք: Ահա թէ ինչու մենք նրա գրածը այդպէս ենք անուանում, որ կը լինի և մեր միակ պատասխանը պարոնին:

Խեղաթիւրումներ և յերիւրումներ ենք անուանում ձեր անհեթեթութիւնների գոհարները, որովհետև դուք ձեռքի տակ չունենալով, ինչպէս և մենք, մանկավարժական ժողովի արձանագրութիւնը, ինչպէս և ինքներդ էք խոստովանում, իբրև հմուտ կեղծողներ ու իմաստակներ, սօֆիզմի շշմացնող լարախաղութեամբ առաջ էք բերում և յիշում միայն այն, ինչ որ ձեզ համար շահաւէտ է ու նպաստաւոր, ինչից հասարակութեան խաբելու համար ձեր ցանկալի ենթադրութիւններն ու երևակայութիւնները կը հետևեն անպայման, և անտես տանում, կուրանում, ճիշտը խլանում (որովհետև լսել էք) այն ամենի առաջ՝ ինչ աննպաստ է ձեզ:

Այդ է ձեր փաստերով խօսելը, յարգելի պարոն:

Եթէ մենք էլ ձեզ նման վարվելու լինէինք՝ պէտք է անհիմն գրութիւնների, մտքում միացածների վրա միայն յենվելով զուր սիւնակներ լցնէինք և անտեղի շահագործէինք խեղճ ընթերցողի աչքերը:

Եւ մենք բաւականանում ենք մատնանշելով սոյն գլխաւոր հանգամանքի վրա, որ «ե՛լլա» էք գրել (և հետևաբար շատ ձեզ ազատ զգացել—ինչ որ կամեցել) և շեշտում հետևեալ երկու կէտերը, որ 1) դուք ձեռքի տակ չունենալով մանկավարժական ժողովի պատճառաբանութիւնները ու պաշտօնական արձանագրութիւնը՝ արձակման պատճառները լուսաբանում էք ձեր ակնոցներով և 2), որ դուք ասում էք՝ թէ արձանագրութեան «կէտերը իրանց բոլոր մանրամասնութիւններով չենք բերում, որովհետև տեղի սղութիւնը չէ ներում և ձանձրալի կարող են թւալ» (№ 21):

Ինարկէ, պ. Թադէոս: Իսկ ձեր իմաստակութիւնների, անհիմն դատողութիւնների ու զրպարտութիւնների համար «տեղի սղութիւն» չը կայ. բա՛ էդ մասին չէիր մտածում: Աւելի լաւ չէ՞ր ասել, որ խոստովանենք՝ մեզ համար շատ էլ օգտաւէտ չէ, բաւ է, թողնենք: Բայց չէ՞ որ դուք «ճշմարտութիւնն աւելի էք սիրում.» ով զարմանք:

Է՛, պ. Թադէոս, շատ էլ ճարպիկ չէք:

Ուրեմն ընթերցողը և բանիմաց հասարակութիւնը վերոյիշեալ երկու կէտերից էլ շատ բան կը հասկանան և այդ հանգամանքները ի նկատի ունենալով էլ կը մօտենան ձեր գրուածքին: Եւ դուք միամիտներ չէք ճարի խաբելու ձեր յերիւրումներին ու խեղաթիւրումները սօֆիզմի քօղով ներկայացնելով:

Ահա մեր ամբողջ պատասխանը ձեր նամակի առաջին մասերին, ձեր իմաստակ տրամախօսութեանը: Աւելին աւելորդականութիւն կը լինէր:

Փաստեր գրող պարոն, ուրեմն նախ ինքներդ փաստերով խօսեցէք, և ոչ... յիշողութեամբ, որովհետև պարզ է՝ թէ ինչ կարող է անել անմեղ և սուրբ յիշողութիւնը, եթէ կամենայ...

II

Գալով ձեր տարածած այն սուտ լուրերին, որ իբր թէ ուսանողները արձակված են «ճեմարանի կարգերը քննադատելու համար», կասենք, որ ոչ միայն սուտ է այդ, այլ միտումնաւոր զրպարտութիւն արձակվածների վրա ուշադրութիւն գրաւելու համար: Այս տարվայ տեսուչը միանգամայն հանդուրժող է այդ կողմից և ազատ ընդունում է ամեն լուրջ կրիտիկա, նոյնիսկ վարչական անձնաւորութիւնների մասին (օր. աշակերտական երգիծաբանական թերթը, որ իրանք աշակերտներն են անձամբ ներկայացնում տեսչին տեսնելու իրան ծաղրված այսպէս կամ այնպէս, մեր ազատ ժողովները և այլն): Դուք խեղաթիւրել էք փաստը, այն կէտը, որ մեղադրում է ուսանողներին զուտ ինսինուացիաներով ու պրօվօկացիայով պարապվելու մէջ և երբեք մաքուր պրօպագանդայի ու կրիտիկայի մէջ:

Եւ դուք առանց կարմրելու, անձնական հաշիւներից դրդված, պրօվօկատօրներին «կարգերի քննադատներ» պատուանունն էք տալիս, իսկ ինչու ինչ միտումներով անտեղի խլրտումների սիրահարներին «յեղափոխական» անուանում իբրև «խռովարարների»: Ձեր տրամադրութեամբ յեղափոխական է և խուլիգանը, որովհետև նա էլ է խռովարար:

Ահա թէ ինչ ժամանակակից գրական գոյներով էք աշխատում ներկայացնել դուրս արվածներին, ցոյց տալու թէ որովհետև արձակված են, ուրեմն ըստ սովորականին մաքուր, ըմբոստ, խռովարար—յեղափոխական տարրեր են (!), և հասարակութիւնը ձեզ կը հաւատայ: Չէ՞ որ այս այնքան սովորական երևոյթ է, մանաւանդ, երբ նրան անյայտ են ճեմարանի այս տարվայ ներքին կեանքն ու կարգերը և արձակվածների ողջ էութիւնը իրանց կատարեալ մերկութեամբ (?)...

III

Վերջացնում ենք մեր խօսքը մի հարցով:

Ո՞ւր էիք դուք, պարոններ, անցեալ տարի, որտեղ էիք պատսպարվել, եթէ «կարգի քննադատողներ» ու անարդարութեան պաշտպանողներ էք իրօք, երբ ամբողջ աշակերտութիւնը քննադատում էր կարգերը և պահանջներ դնում, երբ պաշտպանում էր կործնեցեալ թղթակից արձակված աշակերտին... Դուք, 24-ը, սակաւ բացառութեամբ չը կայիք և ոչ մի կռւում, ձեզ գտնել չէր կարելի. գուցէ միայն խուցերում և փարաշայի փեշերի տակ հովանաւորված: Դուք այդ ժամանակ վտանգի, զոհողութեան շրջանում «խոհեմ» էիք, «կարգապահ»—ժամասէր: Իսկ երբ արդէն իրաւունքներ են ձեռք բերված ուսանողների ապագայի գնով՝ հեշտ է դուրս ցատկել և իրան յեղափոխական անուանել, ըմբոստ հռչակել: Ի՞նչն է աւելի դիւրին՝ քան ամեն բանից յետոյ իրան կնքել ուզած եարլիկով, թէկուզ հէնց ամբողջ էութեամբ հակառակն լինես դրան, և համակրութիւն մուրալ:

IV

Պարոն Թադէոսի նամակի («Մշակ» № 21), մի կէտին ևս պատասխանելուց առաջ՝ յայտնում ենք ընթերցող հասարակութեան, որ իբրապէս ոչ թէ վարչութիւնն է դուրս արել, հեռացրել ճեմարանից երկու ուսանողներին, այլ աշակերտութիւնը, որովհետև վարչութիւնը պատրաստ էր ետ առնելու իր որոշումը, ներելու արձակվածներին, բայց աշակերտութիւնը այդ չը թողեց: Աշակերտութեան մեծամասնութիւնը 89-ը ընդդէմ 24-ի լսելով Մանկ. ժողովի պատճառաբանութիւնները արձակված երկու ուսանողների և մի աշակերտի վերաբերեալ՝ բաւարար գտաւ ուսանողներին արձակելու պատճառները. անձամբ էլ՝ իբրև տարիների ընկերներ՝ շատ լաւ ճանաչելով դրանց, և ընդհակառակը անբաւարար աշակերտին արձակելու փաստերը՝ որոշեց պահանջել վարչութիւնից, ինչպէս էլ որ լինի, հեռացնել ուսանողներին ճեմարանից, իսկ աշակերտին պահել ճեմարանում իր դասարանցիների համար պարտադիր կանոններին ենթարկվելու պայմանով: Սկզբում վարչութիւնը և աշակերտութիւնը կռւում էին, ճիշտ է, միևնոյն բանի դէմ, բայց տարբեր դիրքերից: Եւ որ աշակերտութիւնն ու վարչութիւնը տարբեր ուժեր ու կռւողներ էին՝ ապացոյց նախ այն՝ որ աշակերտութիւնը նրա որոշումը աշակերտի մասին չընդունեց իրաւացի, երկրորդ, երբ վարչութիւնը ինչ-ինչ նկատառումներով լաւ համարեց տանել նրանց գոյութիւնը ճեմարանում գոնէ առժամանակ՝ աշակերտութիւնը դուրս եկաւ և վարչութեան առաջ դրեց իր «ամենախիստ պահանջը» հեռացնել, ինչպէս էլ որ լինի ուսանող արձակվածներին անյապաղ, իբրև անմաքուր տարրեր: Եթէ դրանք մաքուր և իսկապէս «ըմբոստ» ու արդար լինէին՝ աշակերտութիւնը չէր կարող պահանջել դուրս անել նրանց, այն աշակերտութիւնը, որ անցեալ տարի խուստասէր Գաբեգինի ու բռնակալ դէմ գնաց նմանօրինակ, արձակելու, բայց անիրաւ խնդրում մինչև իր ուժերի ու միջոցների սպառելը, որը և հէնց այս տարի դրանց հետ, համեմատաբար թեթև յանցանքների համար արձակված են պաշտպանեց:

Գիտակից աշակերտութիւնը գիտէր՝ թէ ինչ տարրեր են դուրս արվում. պահանջից դուրս անել, և՛ արաւ էլ:

Այսքանն արդէն շատ բան է նշանակում: Աշակերտութեան վարչութիւնից անկախ և նոյնիսկ վերջը նրա դէմ էլ վարած կռիւը շատ պերճախօս է, կոմենտարիաների կարիք չը կայ:

Ահա իսկական պատճառը աշակերտութեան մեծ և փոքրիկ մասերի բաժանման, պ. Թադէոս, եթէ չը գիտէիք մինչև այժմ: Այնպէս որ պրօվակատոր ներկայանում էք ինքներդ՝ կուրանալով այն ինքնաբարբառ փաստի առաջ, որ աշակերտութեան ճնշող մեծամասնութիւնը հեռացրեց նրանց և ոչ վարչութիւնը. սա շատ ուշագրաւ հանգամանք է. 89 ընկերակիցները հեռացրին նրանց. թերևս վարչութեան արտաքսումը շատ էլ ամօթալի չը լինէր: Աւելի խայտառակ բան կա՞յ՝ քան արտաքսվելը ընկերներից, որոնց ատելութիւնը մինչև այն աստիճան էր, որ հազիւ էին տանում նրանց գոյութիւնը ճեմարանում, որ չէին ուզում նրանց հետ դասի անգամ նստել, ձեր այդ «ըմբոստ» սրբութիւնների հետ, որոնց պահպանողն ու ծնունդ տուողը եղել են ճեմարանի մինչայժմեան կարգերն ու վարքերը:

Մի աչքի ընկնող հանգամանք ևս պարզելու համար՝ թէ ինչպէս է, որ 24 հոգի գոնէ իբրև «պաշտպանողներ» են հանդէս գալիս, յայտնենք հետևեալը. եթէ անգամ դրանք միայն պաշտպանողներ լինէին՝ զարմանալու ոչինչ չէր լինի... բայց նկատենք, որ այդ 24-ը միատեսակ ու միատարր խմբակցութիւն չէր նոյն գաղափարներից կազմված, այլ սակաւ թւով իսկապէս «ընկեր» պաշտպանողներ, որոնց հետ միացել էին այս ու այն հաշիւներով ու թաքուն միտումներով միանգամայն հակադիր, ներհակ և այլազան տարրեր, որոնք դէպքի բերմամբ, առիթից օգտվելով դուրս էին եկել տեսչի և վարչութեան դէմ իրանց այլ և այլ «փորձանքներով», բայց աշակերտութեան առաջ կորցնելու տեղի տուին իրանց հետ գրավելով ու անմաքուր դժբախտացնելով շատերին:

Դուրս արվածների հետ հեռացան նաև 20 հոգի, իրանց խօսքից ետ չը կանգնելու համար: Ցաւալի է: Աշակերտութեան և վարչութեան ջանքերը իզուր անցան պահելու, ետ կասեցնելու այդ մտքից դրանց: Եւ մի մասը հեռացաւ, իսկ միւս մասը աւելի հետևողականները, մաշում են Վէհի փեշերը ողորմութեան հայցումներով:

Մեր նպատակն էր պարզել իրողութեան իսկական գոյնը, որ դա ճեմարանական սովորական անարդարութիւններից չէ, և որ իզուր են աշխատում խաբել հասարակութեան բոլորովին այլ գոյներով ներկայացնելով դէպքը, որը միանգամայն այլ բնաւորութիւն ունի մինչև այժմ կատարվածներից: Այս անգամ մի յաղթանակ էր հին կարգերի պահպանող տարրերի ու այլանդակութիւնների դէմ:

Վ. Սիրու

Վաղարշապատ

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կարս, փետրվարի 3-ին

«Մշակի» № 23 Բ. Թորոյեանցի Կարսից գրած նամակը ստիպեց ինձ գտնել «Ժամանակի» 1906 թ. № 3 և կարդալ Թադէոս Մուրոյեանցի նամակը, որով անուանարկում է «Մշակի» վարմունքը դաշնակցականների մասին: Կրկնում եմ, ստիպված եղայ այդ վնասակար թերթը կարդալ, որովհետև «Յառաջից» սկսեալ մինչև վերջին «Ժամանակը» ես կանոնաւոր չեմ կարդում այդ թունաւոր թերթերը: Չեմ կարդում, որովհետև նրանք հանդէս են եկել միմիայն որոշ խմբակի շահերը պաշտպանելու համար, հէնց այդ պատճառով էլ իրանց նեղ շրջանակի մէջ կրիայի պէս բանտարկված, նեղ հայեացքով միակողմանի թայֆայական ուղղութեամբ ծառայում են իրանց համփաներին և գրպանին: Բայց այս մասին մի ուրիշ անգամ. այս գրութեանս միակ նպատակն է ծանօթացնել ընթերցող հասարակութեան «Ժամանակի» թղթակից Թադէոս Մուրոյեանցի հետ:

Պ. Թորոյեանցի նամակը կարդալուց յետոյ, որքան էլ երկար մտածեցի, չը կարողացայ իմանալ թէ ով է Թադէոս Մուրոյեանցը, որ մտել է գրականական ասպարէզ: Դիմեցի սրան-նրան, բոլորից էլ բացասական պատասխան ստացայ: Ուրեմն կեղծ անուն է, մտածեցինք մենք: Վերջապէս երկար հարց ու փորձից դուրս եկաւ, որ կեղծ անուն չէ. Թադէոս Մուրոյեանց ազգանունով մի մարդ կայ Կարսում: Դա արհեստով բուլոչնիկ է, Ալէքսանդրեան փողոցում, կալբասնիկի դէմ խանութ ունի: Մի համեստ, խեղճ կիսագրագէտ մարդ է: Իբրև բուլոչնիկ, հացթուխների մէջ, գոնէ երկրորդ տեղը կը բռնէ: Այո՛, լաւ խմոր հունցել, զանազան կերպարանքով գոյնզգոյն հացեր թխել և ճաշակով լուսամուտների առաջ շարել գիտէ: Մի խօսքով իբրև բուլոչնիկից, իբրև հարևանից գոհ ենք: Բայց բուլոչնիկ Թաթօսը իր խմորը կիսատ թողած, գրիչ վեր առնի, բոբիկ խելքով գրականական ասպարէզ մտնի և 35 տարի հասարակութեան շահերին ծառայող լրագրի ուղղութիւնը քննադատի, դա կատարեալ... (բառ չեմ գտնում): Բուլոչնիկ Թաթօսը կարող է քննադատել խմորի տաշտը, նահապետական ձևով շինած փուռը, ալրաթաթախ ծառաներին, իր արհեստակից հացթուխներին, բայց գրիչ վեր առնել և լրագիրներ քննադատել, դա շատ ծիծաղելի է: Չէ, ուստա Թաթօս, դու քո հացը թխիր, կօշկակարն էլ թող իր կօշիկը կարի, իսկ գրականութեան թող ծառայեն նրանք, որոնք շատ քիչ պատրաստութիւն ունեն:

Արամ

Թիֆլիս, յունվարի 26-ին

Կարդացինք «Ժամանակի» № 18 պ. Տէր-Մարտիրոսեանի նամակը Ն. Աբրահամեանի հաշւապահական կուրսերի վերաբերեալ մենք, նորաւարտ աշակերտներս:

Պ. Տ—Մ-ը թուաբանութիւնը համբրէի վրա մի մեծ գիտութիւն է համարում, մինչդեռ իսկապէս մի դասի մէջ կարելի է վերջացնել և ապա վարժվել. այդ բանը անգրագէտներն էլ կարողանում են անել, իսկ պ. Տ—Մ-ի նման գլխին անմարսելի է: Ինչ վերաբերում է առևտրական նամակներին պ.-ի ասածը ամբողջովին սուտ է, որովհետև մենք աշակերտներս ստացանք մօտ 20 նամակ: Իսկ 20 թէ 100 նամակ այդ միևնոյն է, որովհետև կարևորը տերմինները ուսումնասիրելն է, իսկ առաջադիմութիւնը կախված է լեզուին տիրապետելուց:

Պ. Աբրահամեանի բոլոր ուսուցիչները ամենայն բարեխղճութեամբ և աչալրջութեամբ են վերաբերվում իրանց գործին, որի համար և մենք յայտնում ենք մեր գոհունակութիւնը:

Մեր ասածներին ապացոյց կարող են ծառայել քննութիւններին ներկայ եղող շրջանային տեսչի, առևտրական ուսումնարանի, մասնագէտ համալսարանական, ուսանողների յայտնած գոհունակութիւնը:

Մենք սրանով չենք կամենում գովել Ն. Աբրահամեանի կուրսերը և նրա ուսուցչական խմբերը, այլ ցանկանում ենք ճշմարտութիւնը երևան հանել և ապա հաստատել պ. Տ—Մ-ի զրպարտութիւնները:

Քր. Տէր-Յովհաննէսեան, Մկրտիչ Բաբասեան, Սամսօն Սարուխանեան, Եղիշէ Ռսկանեան, Բագրատ Ղարիբջանեան, Անդրէաս Մելիք-Շահնազարեան, Սեդրակ Յ. Աղիզեան.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աղէտեալների օգտին ստացանք. 1) Շահ-շիրաւ գիւղից (Էջմիածնու գաւառ), գործակալ Սմբատ քահանայ Սարգսեանի միջոցով նոյն գիւղում ժողոված 15 ր. 50 կ., 2) Ղզլ-Արխադից—Ներսէս Ամիրեանից նրա հօրեղբօր Աւետիս Ամիրեանցի մահվան տարեդարձի առթիւ՝ 30 րուբլի:

Այսօր, Արտիստական ընկերութեան դահլիճում տեղի կ՚ունենայ երեկոյթ կովկասեան պօլիտեխնիկումի օգտին: Յոյս ունենք, որ հասարակութիւնը, համակրելով բարի նպատակին, կայցելէ երեկոյթը և այդպիսով կօգնէ աւելացնելու պօլիտեխնիկումի գումարները:

Պետերբուրգում վախճանվել է պաշտօնաթող գեներալ Ազասի բէգ Ալիշարովը:

Փետրվարի 2-ին Մոսկվայում Ս. Ա. Դանի էլ-Բէգեանը դասախօսութիւն է կարդացել կանանց հարցի և նրա ծագման պատճառների մասին:

Էջմիածնի գաւառի 3 բաժանմունքի հաշտարար միջնորդի պաշտօնակատար փոխ գնդ. Էնկելը, որին 2 ամիս առաջ վիրաւորել էին Թիֆլիսում, Լենկորանի գաւառապետի պաշտօնակատար է նշանակվում: («Зак.»)

Թիֆլիսի ժամանակաւոր գեն.-նահանգապետը բաւարարութիւն չէ տուել գինետների և պանդոկների և միւս խանութների տէրերի խնդիրքներին, որոնք խնդրել էին յետաձգել 1907 թւի համար առևտրական վկայականներ ստանալ մինչև մարտի 1-ը:

Դպրոցական մասնաժողովի վերջին նիստում քննվեց մաթեմատիկական դպրոցի կառավարչուհի Ասլիբովայի խնդիրքը՝ նպաստ տալ յիշեալ դպրոցին: Դպրոցական մասնաժողովը որոշեց միջնորդել քաղաքային խորհրդի առաջ, և խնդրել յատկացնել տարեկան 500 րուբլի մաթեմատիկական օրիորդների ուսման համար աւանտարկ, ոչ թէ բացառապէս Ասլիբովայի իգական դպրոցին:

Թիֆլիսի Արտիստական Ընկերութեան անդամներից մէկը գրաւոր կերպով դիմել է յիշեալ ընկերութեան ատեանի խորհրդին, որով յայտնելով արտիստ Վ. Դունիայի ծանր հիւանդութեան և նրա նիւթական չափազանց սուղ դրութեան մասին, խնդրում է օգնել նրան—տալով բժշկվելու համար նպաստ:

Երէկ «Кавказъ» լրագիրը չը լոյս տեսաւ. Վ. Գ. Օգոչկինը յայտարարութիւն է ներկայացրել, որով խնդրում է վերացնել իրանից «Кавказъ» լրագրի ժամանակաւոր խմբագրի պարտականութիւնները: Շատ խնդիրքներ են ներկայացված, որով խնդրում են իրանց յանձնել թերթը: («Зак.»)

X րդ քաղաքամասի պրիստաւի օգնական է նշանակվում պահեստի գօրոդովոյների կառավարիչ Դ. Ա. Դաշկովը, իսկ վերջինի տեղ նշանակված է 10-րդ քաղաքամասի թաղական վերակացու Կուզնեցովը: («Зак.»)

Թիֆլիսի գեն.-նահանգապետի կարգադրութեամբ, նահանգական բանտում բանտարկվածներ Արտէմ Նասիբովը, Կոստա Թադևոսովը, Արշակ Գրիգորեանցը, Աւագ Արզումանովը և Իսայ Առաքելեանցը, իբրև հասարակութեան համար վնասակար անձնաւորութիւններ (փողոցում և բնակարաններում խուզարկելիս գտնված են փամփուշտներով լի ատրճանակներ և ուրիշ զէնք) աքսորվում են Վեատկի նահանգը:

Թիֆլիսի նահանգական բանտում ժամանակաւորապէս բանտարկվածներ Իլիա Գրիկուրովը, Իբրահիմ Կադատ-օղլին, Ալէքպեր Կազիմ-օղլին, Ջանաձէն, Իվան Գօկաձէն, Կուլի-Աբդուլ Հուսէյն-օղլին և Պօղոս Մղդիսի Ալէքսանովը, իբրև հասարակութեան համար վնասակար անձեր Թիֆլիսի գեն.-նահանգապետի կարգադրութեամբ աքսորվում են Թիֆլիսից և Թիֆլիսի նահանգից Վօլօգդայի նահանգը:

Հայոց Ազգագրական ընկերութեան խորհուրդը փետրվարի 18-ին Արտիստական ընկերութեան դահլիճներում սարքում է դիմակաւորված երեկոյթ շատ հետաքրքիր և զանազանակերպ ծրագրով:

Ստացանք «Յառաջ»-ի գրադարանի հետևեալ գրքերը՝ 1) Ժ. Գէդ և Պ. Լաֆարգի «Տնտեսական զարգացումը և Սօցիալիզմը», գինն է 5 կոպ., 2) Միքայէլ Յովհաննիսեանի «Գորդեան Հանգոյցը» (Թիւրքահայոց հարցի վերջին շրջանը), գինն է 20 կ., 3) Միք. Յովհաննիսեանի «Դաշնակցութիւնը և նրա հակառակորդները» (ծրագիր և տակտիկա), գինն է 50 կոպէկ:

Մօտ օրերս վրայ Ֆիլարմօնիական ընկերութիւնը որոշել է մի կոնցերտ կայացնել բժշկվելու համար Միքայէլեան հիւանդանոցում պառկած ընկերութեան անդամ Իլիա Կարգարեթելիի օգտին: Կոնցերտը կը կայանայ Թիֆլիսի երաժշտական վերատեսուչ պ. Նիկոլայևի ղեկավարութեամբ:

Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութեան կրթական մասի նահանգական տեսուչ Մ. Օ. Ֆիշերը առևտրական դպրոցի գանձարանին նուիրել է 380 րուբլի, որպէսզի մանկավարժական մարմինը, իր հայեցողութեամբ, երկրորդ կիսամեակի ուսման վճարից ազատէ 2-րդ դասարանի ամենից կարօտ աշակերտներին:

Կարմիր-Խաչի կովկասեան նահանգական վարչութեան հաշւից երևում է, որ մինչև 1906 թ. նոյեմբերի 1-ը ընկերութիւնը ունեցել է 212,619 րուբլի 79 կոպ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում ստացվել է !240 ր. 21 կ. իսկ ծախսվել է 10985 ր. 30 կ. և 1907 թւի առ 1 յունվարի եղել է 210,874 ր. 74 կ.:

Փետրվարի 6-ին կայացաւ ելէքտրաքարշի վրա հսկող մասնաժողովի նիստը անոնիմ ընկերութեան ներկայացուցիչ Ֆրիդմանի ներկայութեամբ: Մասնաժողովը մատնանշեց ելէքտրաքարշի անկանոն երթևեկութեան վրա, որը արտայայտվում է նրանով, որ նախ վագօնները խմբովին անցնում են մէկ կամ միւս կողմը, ստիպելով հասարակութեանը ամբողջ ժամերով սպասել կայարաններում երկրորդ. որ վագօնները դանդաղ են երթևեկում, որ երթևեկող վագօնների թիւը քիչ է. մատնանշվեց նաև այն բանի վրա, որ վագօնների մի քանիսը անպէտք են: Ֆրիդմանը խոստացել է ամեն միջոց ձեռք առնել՝ յիշեալ պակասութիւնները վերացնելու համար, այսինքն աւելացնել վագօնների թիւը, ի միջի այլոց Օրթաճալայի գծի վրա երթևեկող վագօնների թիւը հասցնել մինչև 4-ի շտապով վերանորոգել փչացած վագօնները և այդ նպատակով հէնց հիմա նրա խօսքով ընկերութիւնը ունի 150 վարպետներ Պեսկովսկի գծի երթևեկութեան արագութիւնը, փողոցի նեղ լինելու պատճառով, մասնաժողովը նորմալ է ընդունել:

Երևանից գրում են «Зак.» լրագրին. փետրվարի 2-ին պօստում պարապմունքները վերջանալուց յետոյ, երբ ծառայողները ցրվեցին, պօստում պահապանի պաշտօնով նոր ընդունված Մարտիրոսովը, չը քաշվելով պահապան զինւորի ներկայութիւնից, գնաց բանալին ձեռքին պօստի պահեստատեղին յուսալով գողանալ այնտեղ գտնվող արժէքաւոր իրերը և փողը: Պահապան զինւորը նախազգուշացնելուց յետոյ կրակեց և ծանր կերպով վիրաւորեց յանդուգն մարդուն: Դէպքի տեղը եկաւ ոստիկանութիւնը և քննիչը: Վիրաւորվածը ուղարկված է քաղաքային հիւանդանոցը. նրա կեանքը վտանգի մէջ է:

Վերջին ժամանակներս Նախիջևանում շատ պաշտօնական անձինք ստանում են անոնիմ նամակներ «իսկական ռուսական» պատիժների սպառնալիքով, նրա համար, որ ցոյց չը տուին պատշաճ աջակցութիւն աջակողմեան կուսակցութիւններին քաղաքային ընտրութիւնների ժամանակ:

(«Ю. Т.»)

Ալէքսանդրապօլից հաղորդում են, որ մօտ օրերս, ցերեկվայ ժամը 3-ին, Ալէքսանդրապօլի բանտի արտաքնոցում մի անյայտ մարդ ինչ որ սուր գործիքով փորից վիրաւորել է բանտարկեալ Տիգրան Ղազարեանին։ Վիրաւորելու մէջ կասկածվում է Խաչօ Յովհաննէսեանը, որի մօտ խուզարկելիս շղթաների տակը սրած երկաթէ մի կտոր են գտել, որ նման է դանակի։

—

Պետերբուրգի քաղաքապետը գաղտնի հրամաններ է ուղարկել պրիստաւներին, որով առաջարկում է նրանց պարտաւորեցնել նախընտրական ժողովի նախագահներին, որպէսզի առհասարակ ժողովում թոյլ չը տրվի քննադատել թէ ներկայ մինիստրներին և թէ նրանց խորհրդի նախագահին։ Հակառակ դէպքում, եթէ ճառախօսները չը կատարեն այդ պահանջը, ժողովը պէտք է իսկոյն փակել։ («Утро»)

—

Պետերբուրգում, քաղաքապետի կարգադրութեամբ թատրոնների ռէպէրտուարից հանված է Բէյէրլէյնի «Вечерняя Заря» պիէսան։

—

Րիգայից հեռագրում են «Бирж. Вѣд.» լրագրին, որ յունվարի 28-ին, տեղական գերմանական հեծանիւների ընկերութեան ինքնապաշտպանութեան հրապարակական ժողովում, ոստիկանութիւնը բոլոր հանդիսականներին խուզարկութեան ենթարկեց։ Բանտարկված են 40 հոգուց աւելի, որոնց թւումն է մի դերասան, ուսանողներ և երկու օֆիցեր։ («Утро»)

—

Յունվարի 30-ին հեռագրով Պետերբուրգ է կանչվել Օդեսսայի նախկին քաղաքապետ Ա. Ն. Նէյդգարդը։ Լուր է պտտում, որ նրան առաջարկելու են Պենզենի նահանգապետի պաշտօնը, սպանված կամերգեր Ալեքսանդրովսկու փոխարէն։ («Товарищъ»)

—

Լուր է պտտում, որ գէնէրալ-ադիւտանտ Լինևիչը նշանակվում է Հեռաւոր Արևելքի փոխարքայ։ («Тов.»)

—

«Товарищъ» լրագիրը հաղորդում է, որ գէնէրալ Տրեպովը դեռ ևս Պետերբուրգի գէնէրալ-նահանգապետ եղած ժամանակ, հոգեհանգստեան դժբաղդ օրերից յետոյ, Պետերբուրգի նահանգում սաստկացրած զինուորական դրութիւն մտցնելու պատճառով խնդրել էր բաց թողնել 115 հազար րուբլի զինուորներին և օֆիցերներին վարձատրելու համար։ Դեռ այն ժամանակ լուրեր էին տարածվել, որ այդ բաց թողնված գումարը բաւական չը համարելով, զինուորական մինիստրը միջնորդել էր 45 հազար րուբլի ևս նշանակել։ Այժմ գլխաւոր շտաբը հաշւելով յիշեալ գումարները, գտել է, որ սպաներին և լէյբ-գվարդիայի զինուորներին (Եգերեան գնդի) տրված է 14,338 րուբլի, Իզմայլովսկի գնդի լէյբ-գվարդիային՝ 17,244 րուբլի և գրենադերեան գնդին՝ 12,294 րուբլի։ Ուրեմն ընդամենը տրված է 73,876 րուբլի։ Երևի մնացեալ գումարը հալվել է ինքն իրան։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը Օդեսսայի գէնէրալ-նահանգապետին ուղարկել է հետևեալ հրամանը. «Պետերբուրգի հեռագրական գործակալութիւնը տեղեկութիւններ է ստացել, որ Օդէսսայում, փողոցներում, կուսակցական կռւի հողի վրա տեղի են ունենում մանակի ծեծ ու ջարդ։ Առաջարկում եմ ձերդ գերազանցութեան ձեռք առնել ամենաէական միջոցներ վերացնելու այդ օրինակ խայտառակութիւնները և պատասխանատւութեան ենթարկել բոլոր մեղաւորներին, որ կուսակցութեանն էլ որ նրանք պատկանելիս լինեն»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺՕՐԷՍԻ ՃԱՌԸ

Ժօրէսը Լիօնում արտասանեց արդի քաղաքականութեան և սօցիալիստների դիրքի մասին մի ահագին, նշանաւոր ճառ, որի ամփոփումը ահաւասիկ։

Ժօրէսը նախ ջանաց հաստատել, որ Միացեալ Սօցիալիստ կուսակցութիւնը միայն այսօր բռնել է սօցիալիստ կուսակցութեան դրօշակը. միայն նա է, որ հանդիսանում է բանւոր դասակարգի ներկայացուցիչը։ Այն սօցիալիստները, որոնք չեն յենվի նրա վրա ճակատագրապէս դատապարտված կը լինեն յենվելու ուրիշ նեցուկների վրա, որոնք պէտք է հեռացնեն նրանց իրանց նախկին, իսկական քաղաքականութիւնից։

Այնուհետև հռետորը պատկերացրեց սօցիալիստ կուսակցութեան դիրքը ուրիշ երկրներում։

Պ. Էնարի, Ռօնի պատգամաւորին պատասխանելով—Պ. Էնարը ամբաստանել էր մի քանի օր առաջ սօցիալիզմը, որպէս ագիտացիայի և ամուլ աններողամտութեան մի կուսակցութիւն—Ժօրէսն ասաց.

—Մենք չենք քննադատում մարդկանց. մենք ուզում ենք փոխել հիմնարկութիւնները, հասարակական կազմը. մենք չենք կամենում հարուածել անհատներին։ Գործատէրը կատարում է իր պաշտօնը. նա մի ուրիշից վատթար չէ. և բանւորը հասնելով գործատիրոջ դիրքին, կարող է ունենալ նրա սիստեմատիկ կարծրասրտութիւնը։

Կապիտալը՝ խտացած աշխատանքի մի զանգուածի արտադրութիւնն է, որից օգտվում է մարդկանց մի փոքրամասնութիւն։ Կապիտալի և աշխատանքի միջև կռիւը յարատև պէտք է լինի։

Ուսուցիչների սինդիկատի մասին խօսելով՝ Ժօրէսն ասաց.

Եթէ կառավարութիւնը անհեռատեսութիւնն ու տկարամտութիւնը կունենայ հալածելու ուսուցիչների սինդիկատները և եթէ մեզ կը հարկադրէ հարցը տանել պարլամենտի առաջ, ոչինչ չէ կարող մեզ արգելել ռէակցիական միջոցներին հակադրելու անհրաժեշտ սանկցիաները։ Անկարելի է, որ կառավարութիւնը վախենայ այն բանից, թէ ուսուցչական սինդիկատները կարող են կապեր ունենալ բանւորական սինդիկատների հետ։ Եթէ նա վստահութիւն չունի երիտասարդութեան դաստիարակիչների վրա, նա հանրապետական չէ կարող լինել։ Փրկութիւնը՝ ազատութեան մէջ է։

Նոյնպէս եթէ կառավարութիւնը մի անխոհեմութիւն գործէր Մարօկի հարցում, սօցիալիստները անպայման կը միջամտէին, բայց կը խուսափէին ապարդիւն կրիզիսներ ստեղծելուց և ռամկավարութիւնը քաօսի մէջ գցելուց։

Եկամուտի վրա տուրքը մի վերջնական դարման չէ։ Բայց նա կը հայթհայթէ բանւորներին գործողութեան նոր միջոցներ։ Այն հարցը, որ այդ տուրքը յարուցանում է, ստանում է մի խորհրդանշանի, սիմվօլի արժէքը, որի շուրջը հաւաքված՝ ռամկավարութեան, սօցիալիզմի մարտիկները կռիւ կը մղեն ռէակցիայի դէմ. դա, այդ տուրքը, հունտը կը լինէր, որից կը ծնէր մի հսկայական ծառ։

Գերմանական ընտրութիւնների հարցը շօշափելով՝ Ժօրէսն ասաց, որ Ֆրանսիայում ռէակցիան և ռադիկալների մի մասը չափազանց շտապեցին աղաղակելու, որ գերմանական սօցիալ-դեմօկրատիան ջախջախված է։

Ճիշտ է, որ գերմանական սօցիալիստ կուսակցութիւնը կորցրեց իր աթոռների մի խոշոր մասը, բայց երբ մի կուսակցութիւն, ինչպէս գերմանական սօցիալ-դեմօկրատիան է, տեսնում է իր դէմ ծառացած միւս բոլոր կուսակցութիւններին, երբ կայսրը, ինքն իսկ, հնչեցնում է կռւի շեփորը և կոչում է կռւի զանազան կուսակցութիւններին, երբ համոզում են մի ամբողջ երկրի, որ եթէ սօցիալիստները յաղթանակեն՝ խաղաղութիւնը վըտանգված է, և երբ այդ կուսակցութիւնը, այդ շփոթի, այդ փոթորկի մէջ, տեսնում է, որ իր ստացած քուէների թիւը աւելանում է մօտաւորապէս մի միլիօն ձայնով, երբ նա կարող է լինում կանգնեցնել փոթորկի ամենաթեժ րօպէին, կայսրութեան ամբողջ ուժերի դիմաց 3 300, 00 գերմանացի պրօլետարներ, գերմանական ազգի մի քառորդը, այդ կուսակցութիւնը՝ ոչ, ջախջախված չէ։ (Ծափահարութիւններ)։

Ժօրէսը չէ հաւատում, որ Գերմանիայի կողմից սպառնում է անմիջական վտանգ. նա այն կարծիքին է, որ քայզրը, ծառացնելով գերմանական նժոյգը, որի մասին խօսեց հեծելազօրքի մի սպայի մօլեգնութեամբ, նա կատարեց մի ստոր մանեօվր, կենդանացնելու համար իր ջլատված հմայքը։

Հռետորը ցոյց է տալիս այնուհետև, թէ ինչպէս ռամկավարական գաղափարը հետզհետէ տարածվում է, հզօրանում բոլոր երկրներում, և իր դէմ է հանում հետզհետէ աւելի սեղմվող յետադիմական կօալիցիան։ Տիրող ու վարող դասակարգերը կարող են փորձել՝ արդար պահանջների այդ ուռչող ալիքի դէմ ցցելու համար արտաքին պատերազմների ուրուականը։ Հանրապետականները պէտք է որ նախապատրաստ լինեն, զինվեն այդ վըտանգի դէմ, երկրի զինուորական ուժերը ներդաշնակութեան մէջ դնելով ռամկավարութեան հետ, որովհետև Ֆրանսիան կարող է ուժգնապէս պաշտպանվել միայն այն ժամանակ, երբ կունենայ մի բանակ կազմված ժողովրդից, ազգից—քաղաքացիներից։

Ժօրէս փառաբանում է այնուհետև Յեղափոխութեան Ֆրանսիային, ազատութեան, մարդկային յոյսերի երկիր։ Անկարելի է, որ մենք դադարէինք լինել յոյսով ու ազատութեամբ միշտ աւելի փառահեղ մի Ֆրանսիա. այնպէս որ, եթէ յարձակվէին այս երկրի վրա, եթէ կամենային մարել արդարութեան այս ջահը, վեր կենայ ինք և գոռայ ինք։

—Կացէք, մենք այդ չենք թոյլ տայ։

Ժօրէս վերջացնում է իր հոյակապ ճառը հրաւիրելով պրօլետարներին համախմբվել Միացեալ Սօցիալիստ կուսակցութեան դրօշի տակ, որը պարունակում է իր ծալքերում սօցիալական արդարութեան և տիեզերական խաղաղութեան երաշխիքը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

6 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ոստիկանութիւնը տեղեկութիւն ստացաւ, որ երդուեալ հաւատարմատարների ժողովատեղում ցրվում են ձախակողմեան կուսակցութիւնների բլօկի պատուիրակների թերթիկները։ Փետրվարի 4-ին, ոստիկանութիւնը խուզարկեց շինութիւնը. Այդ պահուն այնտեղ ներկայ էին երդուեալ-հաւատարմատարների օգնական Սօմովը և 2 ուսանողուհիներ, որոնց մօտ թերթիկները դըրված էին կապոցներով՝ ըստ երեւոյթին բաժանելու համար։ Թերթիկների թիւը հասնում էր 2000—3000 օրինակի։ Խուզարկութեան ժամանակ «Свободный Трудъ» տպարանից բերեցին 10,000 այդպիսի թերթիկներ։ Շինութեան վարձող, երդուեալ-հաւատարմատարի օգնական Սօկոլովսկին, ինչպէս և Սօմովը և այլ մեղսակիցները պատասխանատւութեան են ենթարկվում 1906 թ. յուլիսի 9-ի պարտադիր կանոններով։

Փետրվարի 4-ին քաղաքի զանազան մասերում բռնված են մի քանի հոգի, որոնց թւումն է և մի ուսանող, որ ցրելիս է եղել սահմանադիր-ռամկավարների, ինչպէս և ձախակողմեան բլօկի ընտրողական անուանացուցակները և կոչերը։ Թերթիկները և կոչերը գրավել են, գտնվել են այն տպարանները, ուր տրվել են յիշեալ թերթիկները։

ՕԴԵՍԱ, 6 փետրվարի։ Նաւերի երթևեկութիւնը առաջվայ նման դժուարութիւնների հետ է կապված։

7 փետրվարի

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 6 փետրվարի։ Կառավարութիւնը պատրաստվում է վերսկսել Ճապօնիայի հետ գաղթականութեան հարցին վերաբերվող բանակցութիւնները։ Ճապօնիան, հաւանօրէն, վերջ ի վերջոյ անցաթղթեր չի տայ կուլիներին։ Գաղթականութեան բիլլի պատուիրագրութեամբ առևտրի մինիստրութիւնը նահանգապետային իշխանութիւններին հրահանգ կը տայ՝ կրճատելու գաղթականութիւնը, որով ճապօնացիները առանձին չեն յիշատակվելու։ Այդօրինակ պատուիրագրութիւնը հաւանօրէն բաւարարութիւն կը տայ Կալիֆօրնիային։ Ռուզվէլտի և Սան-Ֆրանցիսկօյի իշխանութիւնների փոխադարձ համաձայնութեամբ օտարազգիների 16 տարեկան որդոց, որոնք խօսում են անգլիերէն, կընդունեն ընդհանուր դպրոցները։ Իսկ օտարազգիների անգլիերէն չը գիտցող զաւակների համար կը հիմնվեն յատուկ դպրոցներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 փետրվարի։ «Телеграфъ» լրագրում, յունվարի 28-ին լուր էր տպված, թէ 1899 թւից սկսած մինչև 1905 թ. Պորտ-Արտուրի վրա ծախսվել է 30 միլիօն րուբլի։ Այս թւանշանները սխալ են։ Ընդամենը այդ ժամանակամիջոցում ծախս եղել է 13,400,000 րուբլի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 փետրվարի։ Արտաքին գործերի մինիստրութեան առաջին ատեանի վերատեսուչ իսկական պալատական խորհրդական Սեմէնտօվսկի-Կուրիլան նշանակված է դիպլօմատիական ներկայացուցիչ բուլղարական կառավարութեան մօտ։

ԲԵՐԼԻՆ, 6 փետրվարի։ Րէյխստագը բացվեց մեծ հանդիսաւորութեամբ։ Րէյխստագի անդամները առաջարկեցին (?) կայսեր պատուին։ Բիւլօվը կայսրին յանձնեց գահական ճառը, որը կարդաց կայսրը։ Ապա կանցլէրը յայտարարեց Րէյխստագը բացված։ Կոմս Լեբէնհէնֆէլդը առաջարկեց (?) (խզված.) կայսրը գնաց հանդստանալու։

ՆՕՎՕ-ՄԱՐԳԵԼԱՆ, 6 փետրվարի։ Նահանգապետի կեանքի դէմ մահափորձողը իրան անուանեց Խէրսօնի նահանգի գիւղացի Եակօվ Եակօվլէվ, սօցիալ-յեղափոխական։ Նա յանձնըվեց պատերազմա-դաշտային դատարանին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 փետրվարի։ Կարմիր Խաչը, որ քաղցի դէմ կռւելու համար իր սեփական միջոցներից արդէն տուել է մօտ 3 միլիօն րուբլի, հրաւիրում է հասարակութեան՝ լրացնելու ընկերութեան միջոցները։ Ընկերութիւնը 2 միլիօն րուբլի վերցրել է պատերազմական ժամանակի կարիքների համար յատկացրված դրամագլխից, իսկ յետաքայում այդ դրամագլխի գործադրութիւնը, որի տօկօսներով պահպանվում են բազմաթիւ բարեգործական հիմնարկութիւններ, նրանց դժուարին կացութեան մէջ կը դնէ։ Եթէ առատ նպաստներ կը լինեն, ընկերութեան գործունէութիւնը թերևս կանգ առնէ, որով հազարաւոր մարդիկ քաղցի դուռն են մատնվելու։ 4 կոպէկով մէկ հոգի կարող է կշտանալ Կարմիր Խաչի բացած ճաշարաններում։ Թող այս հանգամանքը նկատի ունենան հարուստները և չը մոռանան քաղցածներին։

Փետրվարի 6-ին քաղաքապետի նախագահութեամբ, ընկերութիւնների և դաշնակցութիւնների խնդրով գըրվող ժամանժողովը մերժել է վաւերացնել «դեմօկրատիական բարենորոգումների կուսակցութիւնը»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սեֆիլիս) միզասեռ. հ.։
Կ. Մ. ՁԻԿՕՎԱՆԻ—$9\frac{1}{2}$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՄԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒՍՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳՁԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱԳԻԵՏԵԱՆՑ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—$1\frac{1}{2}$—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ե. Գուրգենով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։

ԻՐԻԿՈՒՆԵՐԸ

Կ. Ի. ԳՁԷԼԻԵՎ—$6\frac{1}{2}$—$7\frac{1}{2}$ ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Ջախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԶԳԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը առաւ. 10—12 ժ.
Տելեֆօն № 1087
Սօլօլակ, Լերմոնտովսկայա փող., 16.
(ա. օ.) 103—150

Երկրագործութեան մինիստրութեան և պետական կալուածների գործակալ
Մ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆԸ
(Թիֆլիս, Սերգեևսկի փողոց, տ. № 11).



Խաղողի և մրգատու այգիները բուժելու համար առաջարկում է անգլիական լաւագոյն պղնձի արջասպ, զատ ծծումբ, սրսկիչ «Վէրմօրէլներ», փուքսեր և այգու այլ պարագաներ, ջրհան, քամիչներ, սեկատօրներ, դանակներ և այլն։

Ընդունվում են պատուէրներ պտղատու ծառերի սեփական բուծարանից, Սկրա կայարանի մօտ։ (հ.) 8—12

Թիֆլիսի Ժողովարան
Ուրբաթ, փետրվարի 16 ին նշանակված է պ.պ. անդամների ընդհանուր ժողով քուէարկելու այն անձանց, որոնք ժողովարանի անդամներ են առաջարկված և քննելու մի քանի տնտեսական հարցեր։
(հ. ե. ու,) 2—3

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՅՑ հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճավաձէի № 36
67—100

„Գուտտենբերգ“
գրավաճառանոցում վաճառվում են

Հաուպտման, «Կառապան Հենշել», դրամա 5 գործ գերմ. թարգմ. Լ. Բաբայեանի 50 կ.։
Մխիթար վարդապետ, «Հայերը Ռուսաստանում» 80 կ.։
Անդրանիկ, «Յունական Յեղափոխութեան Հերոսուհին», գինն է պօստի ծախսով 2 ր. 50 կոպէկ։
Փափազեան, «Չորեքլեզուեան Խօսակցութիւն» հայերէն, գաղիերէն, անգլիերէն և գերմաներէն, գինն է պօստի ծախսով 1 ր. 75 կ.։
Կաուցկի, «Կապիտալիստ դասակարգը», թարգմ. Սապահ-Գիւլեանի 15 կ.։
Կաուցկի, «Գործաւոր դասակարգը» (պրօլետարիատ) թարգմանութիւն նոյնի 15 կ.։
«Ինչ արաւ օրօրոցի երգը» թարգմ. Ղ. Կ. 10 կոպէկ։
Բարթօլդու Կ. «Պատմութիւն Յունաստանի», Թուրքերի Կ. Պոլսի առումից 1453 թւից մինչև մեր օրերը, թարգմ. Ս. Կանայեանց 1 րուբլի։
Փիրղալամեանց Ղ. վարդապետ «Զորս ընկերք կամ ճանապարհորդութիւն Վանից մինչև Կ. Պոլիս» 50 կ.։
Իբսեն, «Ներաշխարհ։ Նամակ առ Ինտրա 1 ր. 20 կ.։
Արմեն-Գասպար, «Հայրենիք և ազգային շարժումներ» 10 կ.։
Կոլօնտայ, «Ովքեր են սօցիալ դեմօկրատները և ինչ են ուզում» 3 կ.։
Մարտօվ, «Քաղաքական կուսակցութիւնները» թարգմ. Դաշտոյեանի 7 կ.։
Մարքս, «Պատմական մատերիալիզմ և յաւելեալ արժէքի թէօրիան», թարգմ. Սգատեանի, 10 կ.։
Աշըղ-Հավըր, «Գող Հարօն, Տարօրինակ աղքատ 10 կ.։
Զասօդեմսկիյ. «Անտառի որդին», թարգմ. Զոհրաբի 25 կ.։
Դիմել Тифлисъ, Книжный магазинъ Гуттенбергъ Г. Галустянцу.
1—2

ՃԵՄԱՐԱՆԻ
Ա. և Բ. լսարանների մի խումբ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐ
ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
միջնակարգ և ծխական դպրոցների բոլոր դասարանների համար աշակերտներ։ Վերցնում են և մասնաւոր դասեր տներում։ Որոնում են նաև ՅԱՐՄԱՐ ՊԱՇՏՕՆ։
Դիմել՝ «Մշակի» խմբագրութեան։ 3—5

ՔՍԱՆ ՕՐ Է
անհետացել է
տանից Տիգրան Վարդանեան Նիաւեանցը, Ղազախի Ղլըչու գիւղացի, արհեստով հիւսն, 20 տարեկան։ Խնդրում ենք, ով գիտէ նրա ուր լինելը, բարի լինի յայտնել մեզ։
Հավլաբար, Թելաւսկի փողոց № 20, Մարտիրոս Թամազեանցին, ուր ապրում էր ինքը։ (չ. հ. շ.) 2—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8.
(ե. հ. շ.) 23—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8 ը։ Կուկիա, Սեմեոնովսկի փողոց № 16։
(ու. կ. չ.) 20—20

„ՍՕՏՐՈՒԴՆԻԿ“
ՄԱՐԻԱՄ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ
Գրավաճառանոցը
(Բագու, Օլգինսկայա № 9)
Ընդունում է ամեն տեսակ հրատարակութիւններ կօմիսիայով և պահեստի համար։ Պ. պ. հրատարակիչներին խնդրում ենք ծանօթանալու համար ուղարկել իրանց հրատարակութիւնները և պայմանները։
(շ.) 6—50

Մի հայ երիտասարդ
Իմանալով երկաթուղու բոլոր գործերը,
Ընդունում է ամեն տեսակ պատուէրներ, հին նակլադնօյներ հաշւելու և ստանալու աւելորդ գումարը երկաթուղուց նոր կանօնով ցոյց է տալիս ապրանք ուղարկողներին, կարճ և ձեռնտու ճանապարհներ. ունի օրական 4 5 ժամ ազատ ժամանակ, ցանկանում է ծառայել մի որևիցէ տեղ մատչելի գնով, ընդունում է և աշակերտներ։ Հասցէն պօստում, № 1907 կվիտանցիան ներկայացնողին։
(չ. ու. կ.) 2—3

Одоль
лучшее для зубовъ.
(յ. 28, փ. 8, 1—2

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1907 Թ.
„ՕՐԵՐ“
Հասարակական, տնտեսական, քաղաքական և գրական
ՕՐԱԹԵՐԹԻ
Բաժանորդագինը. Բագւում և Բագւից դուրս տարեկան 6 ր., կէս տարուանը 3 ր. 50 կ., իսկ առանձին համարը 3 կոպ.։ Արտասահմանում բաժանորդագինը կրկնապատիկ է։
«ՕՐԵՐ»-ին բաժանորդ կարելի է գրվել խմբագրատանը՝ Վօրօնցօվսկայա փողոցում, Պարապէտի մօտ (Մէտրօպօլ հիւրանոցի տակ)։
Բաժանորդագինը կարելի է վճարել մաս-մաս։
Դրսից «ՕՐԵՐ»-ին բաժանորդ գրվելու, նամակներ և ծրարներ ուղարկելու համար պէտք է դիմել՝ Баку, Редакція «Ореръ» около Парапета подъ гостиницей «Метрополь».
Արտասահմանից դիմում են. Russie Bacou Redaction de journal «Orére». 2—3

HOFLIEFERANTEN
BENSDORP'S
REINER HOLLÄNDISCHER
CACAO
AMSTERDAM-HOLLAND.

„Вотъ гдѣ экономія соединена съ доброкачественностью“.
ЧИСТЫЙ ГОЛЛАНДСКІЙ
КАКАО
БЕНСДОРПЪ
самый лучшій и въ то же время самый дешевый.
Два раза крѣпче, а потому получается сбереженіе на
$\frac{1}{2}$
въ цѣнѣ или количествѣ.
Это фактъ: скорѣе всего убѣдитесь въ этомъ, покупая какао въ желтой оберткѣ.
(№ 4502) Ներկայացուցիչ Թիֆլիսի համար Максъ Познеръ въ Лодзи.

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатная Типогр. т-ва «ГЕРМЕСЪ» Мадатовская, ул.